# ՍԻՈՆ

## ԱՄՍԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1867

digitised by A.R.A.R.@



ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 5.

# ՄԱՍԻՍ

ՄԱՅԻՍ 31.
1867.

## ԱՄՍԱԳԻՐ

### ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

## ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ի Կ. ՊՕԼՍՈՅ Ի ՏՓԽԻՍ[1]

ՆՈՐԻՆ Վեհափառութիւնը մարտի 28ին, ժամ՝ 5ին Օրթագիւղի Մագսուտեան փոխմաշուք Ախմէտիկ էֆէնտիին ամարանոցին մէջ ազգային երեւելիներուն վերջին այցելութիւններն ընդունելէն, յետոյ՝ եկեղեցական հանդիսիւ իջաւ ի ծովեզերը. ուր բոլոր խուռն բազմութեան իւր հայրապետական օրհնութիւնները ու հրաժարական ողջոյնը մատուցանելով՝ քառաթի նաւակաւ մեկնեցաւ ի շոգենաւ, որ յատկապէս Ն. Վեհ. համար պատրաստուած էր ի կողմանէ մեծազօր Կայսեր Ռուսիոյ, որ և ի պատիւ Ն. Վեհ. խաչանիշ դրօշակը պարզած էր։ Ժամը 6 էր՝ երբ ճանապարհ ելաւ ամենայն յաջողութեամբ, հետը առնելով բոլոր ազգին համակրութիւնը ու որդիական սէրը, որոնք իրենց ապագայ մեծամեծ ակնկալութեանց և Ն. Սրբազնութեան վերայ ունեցած ապահովութեանց երաշխիքն ու գրաւականն են։ Ն. Վեհ. ուղեկից եղան՝ Պօլսոյ Ազգ. Վարչութեան կողմէ Գեր. Յովհաննէս վարդապետը Սեթեան, Գեր. Խորէն վարդապետը Գալֆայեան, Անձ.

(1) Այս յօդուածը Տփխիսէն ղրկած են մեզ Մասիսի մէջ հրատարակելու համար։



digitised by A.R.A.R.@

Աբեդիկ էֆէնտին՝ Նէվրուզեան, Մեծ. մահտեսի Մանուկ աղայն Մուրատեան. Սուրբ Լուսաւորչի Ամէն. Սրբազան Պատրիարքի և միաբանութեան կողմէն Արժ. Սիմէօն վարդապետը Սէֆէրեանց՝ տեղապահ Պօլսոյ փոխանորդի : Նոյնպէս Ջալալեան Գեր. Սարգիս Սրբազանը և Մուշեղեան Արժ. Գրիգոր վարդապետը, որոնք հրաւիրակ եկած էին ի Կ. Պօլիս մայր Աթոռոյն կողմէն :

Մայիս 31 ին, առաւօտեան ժամը մէկին խաղաղութեամբ կը հասնէին ի Նաւահանգիստն Փօթի : Հոն շոգենաւուն մէջ կը ներկայանայ տեղւոյն քաղաքապետը իւր համազգեստով, և կը շնորհաւորէ Ն. Վեհ. ի Ռուսատան ժամանիլը, և յատկապէս Կովկասեան սահմանաց Բարձրա. Միխայէլ մեծ Դուքսի կողմանէն՝ իրեն եղած յանձնարարութիւնը կը յայտնէ ամենայն փառաւորութեամբ ընդունելու զՆ. Վեհափառութիւնը. որ և նա իւր կողմանէ խորին շնորհակալութիւնը յայտնելով, և իրեն համար պատրաստուած նաւակն իջնելով կ՚ելնէն ցամաք : Ծովեզերքը խիստ գեղեցիկ զարդարուած էր դաբնիներով և կերպասներով. հոն դիմաւորեց զՆ. Վեհ. Գեր. Սահակ Սրբազան արքեպիսկոպոսը հանդերձ ժողովրդովք՝ շնորհաւորելով նորա գալուստը : Ուր գնացին անկէ ուղղակի քաղաքապետի տունը, ուր մեծ պատրաստութիւն եղած էր Ն. Վեհ. համար : Հոն տէր Սիմաւօնեան Նիկողոս աղայն համառօտ ճառ մի խօսեցաւ լի ազգային սիրոյ զգացմամբք, որուն պատասխանեց Վեհ. Հայրապետը իւր օրհնութեամբը. Նոյն գիշերը ծովեզերքը լուսաւորուած էր, ուր զանազան տեսակ հրախաղութիւն ևս եղան ի պատիւ Ն. Վեհափառութեան :

Ապրիլի առաջին օրը Փօթիէն մեկնելով հասան ի Մառան, ուր նոյնպէս քաղաքապետը դիմաւորեց զինքը. և հետևեալ օրը մտան ի Քութայիս. հոն բոլոր հայազգի ժողովուրդը և տէրութեան քաղաքական պաշտօնեայք դէմ ելնելով՝ մեծ ջերմեռանդութբ կը մօտենային Ն. Վեհ. աջը համբուրելու : Նոյն գիշերը հոն հանգստացաւ եկեղեցւոյ երէցփոխան Մեծ. Սառփան աղային բնակարանը, ուր ժողովրդեան արդի վիճակին վրայօք բաւական տեղեկութիւններ առնելով Ն. Վեհ. հրամայեց որ աղքատաց համար ալ դպրոց մի հաստատեն և պէտք եղած ձեռնտուութիւնն ալ ընելու խոստացաւ :

Ամսոյն 4 ին հասան ի Սիւրէմ, ուր տեղ զինքը դիմաւորեցին հայ և վրացի ժողովուրդք ամենայն խոնարհութեամբ : Հետևեալ օրը հասան ի Կորի, ուր տեղի ընդունելութեան հանդէսը աւելի փառաւորութեամբ էր. երեկոյին շքեղազարդ սեղան պատրաստեց իւր տունը Մեծ. Աղէքսանդր Ալխանով : 6 ին հասան ի Մծխիթայի սղափոխը, ուր հիւրընկալեցին զՆ. Վեհ. Տփխիսեցի վաճառականք. և նոյն երեկոյին փառաւոր սեղան պատրաստած էր երևելի վաճառականը Շալլով : 7 ին՝ ուղեկցութեամբ յիշեալ վաճառականաց և մեծ բազմութեամբ վեցերորդ ժամուն մտաւ Ն. Վեհ. ի Տփխիս : Քաղաքին մէկ ժամ մնացած տեղ՝ յատուկ կառքեր պատրաստուած էին թէ Վեհ. Հայրապետին և թէ իւր ուղեկցաց համար, որոնց մէջ կարգաւ բազմեցան : Հոն դիմաւորեցին լաւ ամբոխութեան տեղւոյն՝ բոլոր արհեստաւորդք իրենց յատկացեալ դրօշներովը. և Բարձր. Փոխարքային Թիֆլիսապահ զօրքերը և բոլոր հասարակութիւնը Սրբազնասուրբ Հայրապետին երջանիկ գալուստը կը

digitised by A.R.A.R.@

շնորհաւորէին ։ Այսպէս խուռն բազմութեամբ հասան մինչեւ Փոխարքայի պալատին առաջը, ուր բոլոր կղերական ուխտը եկեղեցական զգեստիւք դիմաւորեցին. և Սրբազան Հայրապետը կառքէն իջնելով և զգեստաւորուած գնաց ի մայր եկեղեցին, ուր Տէր. Մակար Սրբազան արքեպիսկոպոսը ի շնորհաւորութիւն Ն. Վեհ. երջանիկ գալստեանը՝ համառօտ բայց ազդու ատենաբանութիւն մի խօսեցաւ, զոր քիչ մի վարը պիտի տեսնեմք ։ Յետ որոյ Վեհ. Հայրապետը ատենախօսութիւն մի լսաւ և օրհնեց զժողովուրդը, և զՎեհ. Կայսրն ամենայն Ռուսաց. և մեկնեցաւ ի Վեհարանն ։

Նոյն ամսոյ 9 ին Վեհ. Հայրապետը ներկայացաւ Բարձր. իշխանին Վըրաստանու՝ մեծ Դքսին Միխայէլի, որ մեծ և արժանաւոր պատուով ընդունեց զինքը ։ Այս եղանակաւ էր նորա ներկայացման եղանակը. բայց կառքի մէջ նստած էր Ն. Վեհափառութիւնը՝ Վսեմ. Օրբէլիէֆ զօրապետին հետ. երկրորդ կառքին մէջ Տէր. Սարգիս և Մակար արքեպիսկոպոսունք. երրորդ կառքին՝ Արժ. Յովհաննէս և Սիմէօն վարդապետք. չորրորդին՝ Արժ. Պետրոս և Խորէն վարդապետք. հինգերորդին՝ Արժ. Սերոբէ վարդապետ և Տէր. Յովհաննէս եպիսկոպոս. վեցերորդին՝ Արժ. Ստեփան վարդապետ և այլն. եօթներորդին՝ Մեծ. Աբեգիկ Էֆէնտին և Մադաք աղայն և այլն ։ Այս օրինակ հանդէսով գնաց Բարձր. Փոխարքային պալատը, ուր մեծ սրահի մի մէջ հինգ րոպէի չափ սպասելով՝ Փոխարքայի սենեկապետ Օրբէլիէֆ զօրապետի առաջնորդութեամբ մտան այն տեղ՝ ուր կանգնած կը սպասէին 40 ի չափ զօրապետներ ։ Դահլիճին մէջտեղը դիմաւորեց Բարձր. մեծ Իշխանը զՆ. Վեհափառութիւնը, և կայնեցաւ դահլիճին ճակատը Վեհափառ Կայսեր պատկերին առաջը, երեսը դէպ ի Վեհ. Հայրապետին դարձուցած. իւր ձախակողմը դրուած էր սեղանի մի վերայ Կաթողիկոսական կոնդակը և Աղէքսանդր Նեւսքիի առաջին կարգի նշանը ։ Բարձր. Իշխանը Վեհ. Հայրապետին Կաթողիկոսութիւնը և ի Ռուսաստան գալը շնորհաւորեց, և յետ այնորիկ ներկայացուց կաթողիկոսական հրովարտակը, ըսելով թէ « Հայոց ազգը ըզՁեզ Կաթողիկոս ընտրած է, և մեծ Ինքնակալ ամենողորմած Կայսրը կը հաստատէ զՁեզ նոյն պաշտօնին մէջ » ։ Յետոյ նշանը մատոյց իրեն, ըսելով. « Ամենողորմած Կայսրը այսու կը պատուէ զՁեզ, և ուրախ եմ որ զՁեզ առաջին անգամ կը տեսնեմ Ռուսիոյ Կայսերութեան ասպետական նշանովը » ։ Վեհ. Հայրապետը ամենայն խոնարհութեամբ և պատուապատշաճ ակնածութեամբ ընդունելով բարեմաղթութիւններ լսաւ, և աւելցուց ըսելով՝ թէ իմ ազգս ու ես յոյս ունիմք մեծագոյն Կայսեր շնորհքները վայելելու ։

Յետոյ Բարձր. մեծ Իշխանը խնդրեց Վեհ. Հայրապետէն որ իւր հետ եղող եկեղեցական անձինքը ներկայացընէ իրեն. և նախ Տէր. Սարգիս և Մակար եպիսկոպոսունք, ապա Արժ. Պետրոս վարդապետը ներկայացան. յետոյ Տաճկաստանէն հետը գնացող ուղեկիցները իւրաքանչիւր կարգաւ ներկայացան ։ Այն արարողութենէս ետքը Բարձր. մեծ իշխանը հետն առնելով զՆ. Վեհափառութիւնը իւր առանձնասենեակը տարաւ, ուր մնաց կէս ժամու չափ. և բոլոր հոն գտնուողներուն խահուէով թէով պատուելէն զկնի՝ վերադարձաւ Ն. Վեհ. ի Վեհարանն ։

digitised by A.R.A.R.@

Մասնաւոր դիտողութեն արժանի է, ինչպէս կը գրէ մեր Թղթակիցը, Կաթողիկոսական հրովարտակը, որուն մէջ կ՚ըսէ Վեհ. Կայսրը, թէ զՁեզ ազգը ընտրեց և ես հաստատեցի. և հայցեմ յամենակալէն Աստուծոյ. որ տայ Ձեզ խորհրդութիւն Ազգին և եկեղեցւոյ օգտակար խորհելոյ և գործելոյ։ Հրովարտակին շրջանակը քառակուսի է, և չորս կողմը հայկական նշաններով զարդարուած. վերի կողմի մէջտեղը կը տեսնուի խաչ, գեղարդ եւայլն. մէկ անկիւնը սուրբ Թադէոսի եւ միւս անկիւնը սուրբ Բարթողիմէոսի պատկերները. առաջնոյն տակ սուրբ Գրիգոր Լուսաւորչի պատկերը և երկրորդին ներքեւ սուրբ Մեսրոպայ պատկերը կը տեսնուին, Գառն Աստուծոյ դրօշը, Տրխատար դաստառակը եւայլն։

---

Աւասիկ Գեր. Մակար Սրբազան արքեպիսկոպոսի խօսեցած ատենաբանութեան օրինակը։

«Բան՝ ՚ի շնորհաւոր գալուստ ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսի ամենայն Հայոց Տեառն ԳԷՈՐԳԱՅ և Ասպետի՝ ՚ի քաղաքն Տփխիս։

«Ով տէր իմ, Աստուածընտիր Հովուապետ, խորին ակնածութեամբ մատչիմ յայս հանդէս շնորհաւոր եկաւորութեան Ձեր ՚ի սիրախնամ քաղաքս, և հրատարակել յանուն որդւոց հայրենեաց զայցելութիւն վերնախնամ Տեսչութեանն երկնից՝ տալով մեզ զարդարանէր Հովուապետ բարի ՚ի միխիթարութիւն տանս սրբոյ որդւոց մօրն լուսոյ Կաթուղիկէ սրբոյ Էջմիածնի։ Այցելութիւն առեալ անեչութեան երկնից՝ որոյ նախասահման տնօրէնութիք այն կերպարանեցուցիք ՚ի Գերարժանութեան Ձերում վիճակօր ձայն և զհամակրութիւն աղէի իբրեւ հաւատարիմ վկայ ընտրեցեալ գոլով Վեհիդ ՚ի Տեառնէ յայդ վսեմ պաշտօն մեծ Քահանայապետութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, առ որ ամենայն զգայուն սիրտ դառնայ այժմ հրաբաշխեալ ՚ի մեզ զմարգարէական անսերիւր խոստովանութիւն. «Մեծ արար Տէր զառնելն իւր ընդ մեզ, և մեք եղաք ուրախացեալք»։ Սաղմ. ճԻԵ. 4։

Եւ յիրաւի եթէ առցուք ՚ի կշռադատութիւն խորհրդոց զծանրակշիռ հանգամանս եկեղեցական կառավարութեանց, զատարեալ դրութիւն հոգեւորական վսեմ գործոց, և զազգապատում խնդիր ժողովրդեան ՚ի հօտառէր Հովուապետէդ վասն բարօրութեան եկեղեցւոյ իւրոյ սրբոյ, յանհնարին է չխոստովանել, Հայրապետ մեծ, թէ տակաւին հաշտ ակամբ հայի Նախախնամն ՚ի նուիրական տեղի Էջմիածնի իւրոյ և ՚ի բնակաւորս Հայաստանի։ Եւ առ ՚ի նախանձելի բաղձոց հանդիսացուցանելոյ զայս Ձեզ ըստ օրինակի հայրն մերոյ առաջնոյ, այսօր կալեալ զանձն ձեռամբ Ձերմէ ՚ի խորհուրդս իւր առաջնորդէ, և փառօք ածեալ զՁեզ յարեւմտից յարեւելս՝ բանայ Ձեր առաջի զասպարէզ չքնաղ մեծագործութեանց, ՚ի նորոգութիւն փառաց Տաճարին սրբութեան, ՚ի բարեկարգութիւն հոգեւորական վսեմ գործոց, և ՚ի յառաջադիմութիւն ազգային հոգեւոր դպրոցաց բացելոց ՚ի Թեմս և ՚ի քաղաքս. յորս ըստ առեալ Ձեզ ՚ի վերուստ հոգեկան զօրութեանց՝ քրտամբ չափ ձգնելոց էք ՚ի կործանումն խաւար տգիտութեան։ Ահա ակնկալութիւնն Հօտին անարատ խօսեցելոյն Ձերում անախտ փեսայութեան. ահա այսօրիկ էին, զոր զգացին մեզ անցեալ ժամանակք, և զոր յուսայ

digitised by A.R.A.R.@

ընդ հանրութիւն ազգի ՚ի Ձեզ անսանել պատկառութեալ։ Մեք հաւատամք Տէր, զի կամքն Ձեր՝ է գործ կատարեալ փառս բարօրութեան համազգային եկեղեցւոյ. ուրեմն ձեզ մնայ վճռել զանխախտութիւն նորին, Ձեզ մնայ արդարացուցանել և մինչ խաղագրաւել զհամակրութիւն ժողովրդեան յօժանդակութիւն համարձակ խորհրդոց և կամաց Ձերոց։

Այլ դուք, հանդիսակից ժողովուրդք, որում անհամբերութեամբ հոգւոց սպասէիք. ահա Հայր մեր և Տէր հոգեւոր. ահա Հովուապետ բարի մեզ հովուացս և ձեզ հովուեցելոց. ահա գայ ամբառնալ յառաքելական Աթոռ նախահայրապետին մերոյ սրբոյն Գրիգորի մեծի և բարձրացուցանել զազգ և զեկեղեցի ՚ի պատիւ և ՚ի փառս։ Արդարեւ յառաջ մատիք ձայնակցել ընդ իս՝ ասելով. Օրհնեալ եկեալդ անուամբ Տեառն. Օրհնեալ է շնորհաբեր գալուստդ յանուն հօր մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի. Օրհնեալ Քրիստոսապատկեալ Կայսրն ամենայն Ռուսաց Աղեքսանդր Նիկոլայեւիչ, որ յատուկ առանձնաշնորհութեամբ իւրով առ ազգս Հայոց նշանաւորեաց վասն մեր զայս օր բարեբջանիկ. Օրհնեալ և բարձր իշխան Փոխարքայն Կովկասեան սահմանաց Միխայէլ Նիկոլայեւիչ, որոյ անդարձ միջնորդութբ երջանկանայ այսօր Հայաստանեայց եկեղեցի փայլելով զուարթութբ շնորհս Ինքնակալին ամենայն Ռուսաց. որովք արդարեւ մեծ արար Տէր զառնելն իւր ընդ մեզ, և մեք եղաք և եղիցուք բերկրեալք. այժմ և միշտ և յաւիտեանս։

յ7 Ապրիլ 1867 ամ. ՚Ի Վանս
Մայր Եկեղեցւոջ Հայոց Տփխեաց։

Համառօտ տնտեսութեան կանոնաց, որ 1828 թուին հրապարակեցաւ ի Տփխիս Լուսաւորչական եկեղեցւոյս՝ համեմատական Հայոց Երկրոյն գաւառաց։

՚Նախորդ մասի և այլոց ամսաթերթերով հրատարակուած հօդերս Պօղոս Պատրիարքի մէկ առանձնաշնորհութեանը ձեռնարկու նկարագիր մի սըւնիք ներկայ գարուս առաջին քառորդին մէջ ստացած Լուսաւորչական և Հռոմէական Հայոց կրօնական վէճերուն. որոնց մանրամասն պարագաները ժամանակագրաց թողլով, հա կ'ուզեմք հրատարակել Լուսաւորչական ուղղափառ եկեղեցւոյս կողմանէ յօրինուած հաւատոյ դաւանութիւնը, որում պատճառ տուած են Հայոց եկեղեցիէն բաժանեալները։ Վասն զի՝ 1828 ամին երբ Ի. [illegible] ընտրուեցաւ իւր հրամանին հակառակորդներուն դէմ չարաչար բռնութիւններ բանեցընել, ինչպէս որ գուշակած էր հօդերս Պօղոս Պատրիարքը իւր վերոյիշեալ առանձնաշնորհութեանը մէջ, բաժանեալ կողմը սկսաւ կրից զայրութէն ու սրտին կսկիծէն Հայերը հերձուածոց են կանչել, և ուրիշ քրիստոնեայք ևս անոնցմէ լսելով անոնք այ սկսան գայթակղիլ Լուսաւորչական եկեղեցւոյն ուղղափառութեը վերայ։ Ասոր համար այն ժամանակի մեր լուսաւորեալ ազգայինք հաւատալեաց մէջ իրենց ունեցած ուղիղ խոստովանութիւնը ձեռնարկէր օտարաց ականջին հասցնելու և զանոնք սարսափ մեղքէ և գայթակղութենէ և անմեղ Եկեղեցին ևս զրպարտութենէ ազատելու համար փութացին այս օրինակ դաւանութիւն մը ընծանել քրիստոնէութեան դիմաց, իբրև ուղղափառութե առաքելական սուրբ եկեղեցւոյս Հայաստանեայց։ Յիշեալ

digitised by A.R.A.R.@

դաւանութեան հանգամանօք յօրինեալ է Զմիւռնիոյ սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյ պատուարժան քահանայ և մեծ վարժապետ Վանանդեցի Տ. Յովհաննէս Միրզայեան, գրեալ յերրորդն սեպտեմբերի 1828 ամին:

“ Գիտեմք հաստատութեամբ, թէ հերետիկոսութիւնն է մոլորութիւն մտաց 'ի մտաւնս հաւատալեաց հանդերձ յամառութեամբ կամաց. գիտեմք և զհերձուածողն հերետիկոսութե և նզովելով բացէ 'ի բաց փախչիմք 'ի նոցանէ: Չեմք անտեղեակ մոլորութեն Սաբէլի՝ որ զմի անձն միայն դնէր յամենասուրբ Երրորդութեան: Վերահաս եմք չարափառութեանն Արիոսի և Մակեդոնի, յորոց մին արարած ասէր զՈրդին, և միւսն զՀոգին սուրբ: Չէ ծածուկ առ 'ի մէնջ հերձուածն Նեստորի՝ որ չարաչար բաժանէր զերկու բնութիւնս 'ի Քրիստոս, և երկու անձն դնէր բաժանաբար: Ճանաչեմք և զմոլորութիւնն Եւտիքեայ, որ անխմաստ խորհրդով շփոթէր և խառնակէր զաստուածային և զմարդկային բընութիւնն 'ի Քրիստոս:

“ Այսպէս յայտնի են մեզ և այլ ևս ամենայն հերետիկոսացն մոլորութիւնք, որք յանդգնաբար և յուղղափառ ժողովոյն դատապարտեցան: Սոսի և մեք խակ ուղղութեամբ սրտի և հոգւոյ համաձայնեալ ընդ սուրբ ժողովոյն Նիկիոյ, Կոստանդնուպօլսի, Եփեսոսի և այլոց ևս ուղղափառ ժողովոց՝ ընդունիմք և դաւանիմք զառ 'ի նոցանէ հաստատեալ հաւատ՝ ներշնչութեամբ շնորհաց Հոգւոյն սրբոյ պարզաբանեալ, և հիմնեալ աստուածային և առաքելական անաւէր բանիւք: Եւ խոստեալ հերքեմք և ոչ ընդունիմք զնորագիւտ նորին, որ ներհակ աստուածային և առաքելական աւանդի՝ մոլար խառնի յուղղութենէ այլատարազ նորաձևութեամբ 'ի հաւատոյն:

“ Ընդունիմք առ մեզ զհանգանակն Նիկիոյ և Կոստանդնուպօլսի, զորս և միաւորեալ ընթեռնումք յամենայն եկեղեցի մեր, զի զմատունս հաւատալեաց համառօտ և յստակ միօք առաջի առնեն լուսաւորութեամբ 'ի հոգւոյն սրբոյ, և հաստատութիւն յաստուածային ուղղափառ գրոյն սրբոյ՝ ուղիղ դիտաւորութեամբ:

“ Եւ արդ՝ հաւատամք յԵրրորդութիւնն սուրբ. և զերիս անձինս դաւանիմք 'ի միում բնութեան 'ի աէութեան և յիշխանութեան. անսկիզբն՝ անեղ՝ անժամանակ՝ անչափ՝ անպարագիր և անսահման: Իսկ զանուանս երից անձանցն որոշեալ ունիմք ծանօթաբար՝ Հայր և Որդի և Հոգի սուրբ: Եւ զերիս անձինս ոչ երեք աստուածք դաւանիմք, այլ՝ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն յաւէտ անքակութեամբ սերտեալ 'ի յաւիտենից, յորս է մի և անեղափոխ բնութիւն անճառելի:

“ Հաւատամք զՀայրն Աստուած անեղ՝ անծին և անսկիզբն աղբիւր գերագոյն Աստուածութեան. և սկըզբնաւոր անեղական արեգակն երկուց աստուածեղէն լուսափայլութեանց աննիւթ և անորոշելի. և աղբիւրեղէն Աստուածութիւն և Աստուածածնողականին Աստուածածնողութեանց ըստ Դիոնէսիոսի: Որ յանհուն և յաւիտենական էութեանն խնամակալութենէ ծնաւ անսկզբնաբար զհաւասարակիցն էութեան իւրում զԲանն անձնաւոր զՈրդին միածին. և 'ի համահաւասարութենէ 'ի ծայրագոյն բարի յէութեն բղխեաց յաւիտենականաբար զանըսպառ աղբիւրն բարութեան զՀոգին սուրբ: Զի որքան Հայրն՝ Հայր, նոյն

digitised by A.R.A.R.@

և Որդին՝ Որդի, և Հոգին սուրբ բղխումն անապատ. և չէր ժամանակ, յորժամ՝ չէր առ նմա և ընդ նմա Որդի և Հոգի. յորոց միակամ բարերարութեանց առեղծեալ գոյացան ամենայն արարածք երևելիք և աներևոյթք։

«Հաւատամք և զՈրդին միածին անսկիզբն և անժամանակ ծնունդ 'ի Հօրէ, անպարագրելի և անփոփոխ պատկեր էութեանն Հօր. և նոյն՝ էութեամբ և գոյութեամբ ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյն, փառակից և աթոռակից իւր համագոյակցաց. Աստուած Աստուծոյ, լոյս 'ի լուսոյ, անեղ յանեղէ. և խնկական նկարագիր գոյացութեան, և աստուածատուր շառաւիղ սկզբնալոյս արփառոյն, որ լնու զամենայն յամենայնի, և ինքն մնայ անուազ և անբովանդակելի։

«Հաւատամք և զՀոգին սուրբ բղխումն 'ի Հօրէ անապատ և անճառ 'ի Հայրաշարժ աղբերէ անտի Հօրն էութէ գետ մշտածաւալ. և ընդ Հօր և Որդւոյ միով փառաւորութեամբ պաշտեալ և երկրպագեալ. տէր և կենդանարար բոլորեցունց, և ճշմարտապատում Թարգման խորոցն աստուածայնոց. որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս։ Ըստ պատճառին՝ յառաջ բղխեալ 'ի Հօրէ միայնոյ, որպէս և իւր իսկ համագոյակիցն անշուշտ վկայէ. «Հոգին ճշմարտութե որ 'ի Հօրէ ելանէ». իսկ ըստ ունակութեան և շնորհաբաշխութեան՝ հաւասար Հօր և Որդւոյ. որպէս և նոյն ինքն Փրկիչ հեռաւեցուցանէ յառէջն առ աշակերտսն. «Յինմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ»։ Զի մի գետութիւն է յերիս անձինս։ Եւ զայն դաւանութիւն առ Հոգին սուրբ՝ բակզբնական դաւանութիւնն եկեղեցւոյ և համագումարին Կոստանդնուպօլսոյ հաստատուն սահմանեն. և Յոյնք իսկ հաստատութեամբ ունին և խոստովանին առանց այլայլութեան։

«Հաւատամք և 'ի մարդեղութիւն Բանին Աստուծոյ ուղղափառ մտօք և առողջ դաւանեմք. զի նոյն ինքն անժամանակ ծնունդն հայրենի անպարագիրն յէութեան փառն փրկութեան մերոյ իջեալ ըստ աւետեացն Գաբրիէլի՝ անարատ յղացաւ յորովայնի անարատ կուսին Մարիամու համահաճ կամօք Հօր և Հոգւոյն, և առեալ զբնութիւնն մեր 'ի մաքուր յարենէ նորա միաւորեաց ընդ իւրում Աստուածութեան անշփոթ և անբաժանելի՝ թափանցական խառնութեամբ. որպէս լուսոյ ընդ օդոյ, և հրոյ ընդ երկաթոյ, և կամ հոգւոյ ընդ մարմնոյ, նոր և սքանչելի միաւորութեամբ։ Վասն զի Թէպէտ և Աստուածն կատարեալ եղև մարդ կատարեալ, սակայն ոչ անյօդ և պարզ բնութիւնն աստուածային 'ի Թանձր և յօդաւոր բնութիւնն մարդկան փոխեցաւ. և ոչ իսկ մարմինն գգալի 'ի յանօսր և յանըմբռնելի բնութիւնն աստուածային. այլ կացին միացին երկաքանչիւրն առանց փոփոխման և առանց այլայլութեան, անշփոթ և անբաժանելի միաւորեալ. ուստի և յերկուց կատարեալ բնութեանց անշփոթ և անբաժան միաւորելոյ եղև մի անձն, մի դէմ, և մի անճառաբար փառաւորեալ բնութիւն. և ոչ ըստ Նեստորի և Եւտիքեայ մոլար չարափառութեանց, զորս նզովէ սուրբ եկեղեցի։ Եւ ինն ամսեայ ժամանակաւ ժուժկալեալ յարգանդի անարատ կուսին Մարիամու ծնաւ որպէս մանուկ, անխախտ պահելով զկուսութիւն ծնողին իւրոյ՝ զի անարատ էր յղութիւն, և անապական՝ ծնունդն. ոչ սկիզբն ունելով աստուածութեան և ոչ փոխճան մարդկութեան. զի Քրիստոս Յիսուս երէկ և այսօր՝ նոյն և յաւիտեանս

digitised by A.R.A.R.@

ըստ սրբազան առաքելոյն Պօղոսի ։

“Եւ նոյն ինքն կուսական կաթամ-բըն կերպարեալ գայ յաճումն հասակի ըստ անօրէնութեանն, և զամս երեսուն շրջեալ 'ի վերայ երկրի եկեալ մկրտի 'ի Յովհաննէ 'ի գետն Յորդանան. և յայտնեալ վկայի ձայնիւ Հօր և աղաւնակերպ իջմամբ սուրբ Հոգւոյն ։ Աստուածահրաշ սքանչելեօք և վարդապետութեամբ բարեբարէ ազգի մարդկան. չարչարեալ՝ խաչի, մեռանի, և մարմինն դնի 'ի գերեզմանի միաւորեալ աստուածութեամբն. և հոգին իջանէ 'ի դժոխս անբաժանելի աստուածութեն ։ Յերրորդ աւուր ինքնիշխան զօրութեամբ յառնէ 'ի մեռելոց. և բազմիցս երեւի աշակերտացն 'ի հաւատ յարութեան իւրոյ, որով և զբնութիւն մեր յարոյց 'ի մեռելութենէ մեղաց ։ Եւ նովին առեցեալ մարմնովն համբարձեալ յերկինս նստի ընդ աջմէ Հօր 'ի նախնական աթոռն հաւասարութեան՝ յորմէ և բնաւ ոչ մեկուսացաւ ։ Գալոց է և նովին մարմնով և հայրական փառօք դատել զկենդանիս և զմեռեալս, և տալ զհատուցումն իւրաքանչիւր գործոց, չունելով երբէք զվախճան թագաւորութեանն ։

“Հաւատամք 'ի մի միայն կաթուղիկէ և առաքելական սուրբ եկեղեցի, որ է հաւաքումն ամենայն ուղղափառ քրիստոնէից մկրտելոց յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ յամենայն ազգաց, որոյ իսկական գլուխն է նոյն ինքն տէրն մեր Յիսուս Քրիստոս ։

“Հաւատամք և 'ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, 'ի քաւութիւն, և 'ի թողութիւն մեղաց, 'ի յարութիւն մեռելոց, և 'ի յաւիտենից դատաստանըն հոգւոց և մարմնոց, յարքայութիւն երկնից և 'ի կեանսն յաւիտենականս ։

“Եւ միաձայնեալ ընդ նմին ինքեան կաթուղիկէ և առաքելական եկեղեցւոյ նզովեմք զայնոսիկ, որք ասեն, էր երբեմն յորժամ ոչ էր Որդի. կամ էր երբեմն յորժամ ոչ էր սուրբ Հոգի. կամ թէ յոչէից եղեն. կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ կամ զսուրբ Հոգին. և թէ փոփոխելիք են, կամ այլայլելիք ։ Վասն զի և յառաջին ժողովն Նիկիոյ 'ի վախճան հանգանակին 'ի նոյն կնքեցաւ 'ի ժողովեալ հարց. զոր և սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր ընկալեալ կնքեաց իւրով սրբագրութեամբն՝ ասելով. “Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկրպագանելով սրբոյ Երրորդութեան և մի Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն” ։

Ի ՅԱՋՈՐԴՆ.

Գերապատիւ Իսահակ Մէրտալեան արքեպիսկոպոս
և իւր ողջոյնը ի Սուէզ հասնիլը.

Ապրիլ 27 թուով նամակ մը ստացանք Գեր. Իսահակ արքեպիսկոպոսէն, որ իրենց ի Սուէզ հասնիլը կը ծանուցանէ հանդերձ ուրիշ հետաքրքրական տեղեկութեամբք ։

Յեգիպտոս Անգղիոյ Վսեմ. ընդհանուր հիւպատոսի հետ տեսութիւն ընելէն յետոյ, նորա տուած յանձնարարական թղթերով յիշեալ ամսոյն 10 ին՝ աւագ երկուշաբթի օր Եգիպտոսէն կը մեկնին երկաթուղիով, և նոյն օրը երեկոյեան դէմ գրեթէ 7 ժամու միջոցին կը հասնին ի Սուէզ. ուր գաղղիական պանդոկի ( օթել ) մը մէջ սենեակ մը վարձելով կը հանգստանան ։ Նոյն ժամուն առանց ժամանակ անցընելու՝ Անգղիոյ պարոն հիւպատոսի իմաց կու տան իրենց գալը, և հետեւ-

digitised by A.R.A.R.@

եալ առտուն պայմանեալ ժամուն տեսութեանը երթալով ընդհանուր Հիւպատոսին յանձնարարական գիրը կը մատուցանեն. և խիստ մեծ պատուով ընդունելութիւն գտնելէն ի զատ, կը յայտնէ իրենց պարոն Հիւպատոսը թէ ամէն ինչ որ կարելի է իրեն՝ պատրաստ է կատարել ամենայն յօժարութեամբ: Գեր. Իսահակ Եպիսկոպոսի կամքը օր յառաջ ճամբայ ելնել ըլլալով, և գժբաղդաբար իրենց հոն հասնելէն 3 օր յառաջ շոգենաւը մեկնած գտնուելով, կըստիպուին 12 օրի չափ հոն սպասել հետեւեալ շոգենաւով երթալու: Այս թէպէտ պարոն Հիւպատոսը Եգիպտոս ընդհանուր Հիւպատոսէն հեռագրաւ խնդրեց որ Տէրութենէ հրաման առնելով յատուկ շոգենաւ մի հանելու իրենց համար, այսու ամենայնիւ ընդհանուր Հիւպատոսը օր մի յառաջ Փարիզու արուեստահանդէսին համար ճամբայ ելած ըլլալով, կըստիպուին սպասել:

Այս արգելումը առանց Աստուծոյ կամացը չէր, ինչպէս հիմայ պիտի տեսնեմք. վասն զի երբ մտադիր եղած էր Գերս. Սրբազանը Արժ. Տիմոթէոս վարդապետին հետ կրկին Եգիպտոս դառնալ ու հոն կատարել սուրբ զատկի տօնը, աշուրնուն քանի մի հայ պանդուխտներ պատահելով՝ անոնցմէ կ'իմանան որ 100ի չափ ազգայիններ կան այն կողմերը աշխատելու համար եկած. ուստի իրենց սրբազան պաշտօնութեանցը հակառակ ներելով զանոնք հոն թողուլ երթալ այնպիսի օրեր, և համոզուած ըլլալով՝ որ «յատուկ Աստուծոյ օրհնեալ կամեցողութիւնն է նոյն տեղի հայ ժողովրդեան սիրոյն համար զիրենք հոն արգիլելը», ինչպէս կ'ըսէ նամակին մէջ; վասն որոյ կ'որոշեն սուրբ Զատկին առաւօտուն ժամերգութիւն կատարել հոն, և բոլոր ժողովուրդը խոստովանեցնել ու հաղորդել սրբազան Խորհրդոյն: Ուստի կը հարկադրին Գաղղիոյ Հիւպատոսին տեսութեան երթալ, և կերպով մի իրենց դիտաւորութիւնը անոր կը յայտնեն, որ կը խոստանայ իրենց կարգաւորաց իմացընել և անոնց մատուռին մէջ կատարել տալ ժամերգութիւնը: Նայց երբ անոնք կը մերժեն, ինչպէս որ կանխաւ գուշակած էր Գեր. Իսահակ Եպիսկոպոսը, պարոն Հիւպատոսը իր խնդիրքը չընդունելուն վրայ կարեւմէր սիրար խոցուած, իր յատուկ սենեակին մէջ կ'առաջարկէ որ ժամերգութիւնը կատարեն, զոր իրեն մեծ պատիւ և փառք կը համարէր: Ուստի խթման օր յատուկ մարդով մի լուր կը խրկեն ի Շալուֆ, որ Սուէզէն 4 ժամ հեռու է և անուշ ջրով կ'երթըւի, ուրտեղ նոր բացուելիք ջրանցքին համար 70 հայ պանդուխտք կ'աշխատին: Ասոնց 65ը Մշեցի են, և ինչպէս յայտնի է՝ խիստ հաւատաւոր ու ջերմեռանդ մարդիկ ըլլալով, Աստուծմէ կարգաւոր մի կը խնդրեն եղեր՝ որ զիրենք հաղորդեցընէ և հոգեւորապէս մխիթարէ: Ուստի հրաւիրանաց գիրը ընդունելնուն պէս, գիշերուան ժամը մէկէն սկսելով մինչեւ հինգ՝ կարգաւորութիւն ունեցող անձինք ուրախութեք և փառք տալով Աստուծոյ նախախնամութեանը՝ կը փութան ի Սուէզ գալու: Նոնք դեռ չհասած՝ Գաղղիոյ պարոն Հիւպատոսին յանձնած սենեակը արդէն փոքրիկ մատուռ մի դարձած էր շնորհիւ Արժ. Տիմոթէոս վարդապետին, և սկսած էին ի Սուէզ գտնուող ազգայինքը կանչել ու խոստովանեցնել, որ հասնելով նաև Շալուֆի ժողովուրդն ալ, ժամը վեցին խոստովանութիւնը կը լմնցնեն:

Հետեւեալ առաւօտուն զատկական խորհրդոյն ժամերգութիւնը կը



digitised by A.R.A.R.@

ակսին կատարել ի ներկայութեան պարոն Հիւպատոսին . հոն բոլոր ջերմեռանդ ժողովուրդը կը հաղորդուի , և Գեր . Իսահակ Սրբազանը համառօտ առենաբանութիւն մի զանոնք մխիթարելով ու սրտապնդելով , կ'օրհնէ և զբարեսէրս Պ . Լիպուլ Հիւպատոսը , գովելով նորա ցոյց տուած քրիստոնէավայել մարդասիրութիւնը և ազատամտութիւնը , որու իրենց խորին շնորհակալութիւնը յայտնելով և Ամէն . Սրբազան Պատրիարքը հօր լուսանկար պատկերը նուիրելով , նա ալ փոխադարձ իւր պատկերը կը խրկէ նամակաւ առ Սրբազան Պատրիարքն ։

Այս ալ չմոռնանք ըսելու , որ պանդուխտ հայոց մէջ 30 ի չափ անձինք ակարութեան և հիւանդութե պատճառաւ չկրնալ գալէրնուն Գեր . Իսահակ Սրբազանը զԱրժա . Տիմոթէոս վարդապետը յատկապէս կը խրկէ ի Շալլուֆ , ուր զանոնք խոստովանեցընելով կը հաղորդէ . և յետոյ ժողովրդեան հետ Լատինաց գերեզմանատունը կ'երթայ , և հոն առանց Թաղման օրհնութեան Թաղուած չորս հոգին ննջեցելոց գերեզմաններուն վերայ Թաղման ամբողջ խորհուրդը կատարելով կ'օրհնէ ։ Այս խեղճերը Թէպէտ և խոստովանիլ ու հաղորդուիլ խնդրած են լատին քահանայիցմէ , բայց նորա չեն ուզած մատակարարել ։ Յիշեալ գերեզմանատունն ալ Թէպէտ և լատինաց անուամբը կը յիշուի եղեր , սակայն տեղւոյն Էֆէնտին նոյն տեղը ձրի շնորհած է ի խնդրոյ բոլոր քրիստոնէից՝ որոնք հոն կ'աշխատին ։ Տիմոթէոս վարդապետը ըսելով որ հոն ի Շալլուֆ Խարբերդցի Աջէքեան անուն հայուն մէկը պարտքի համար բանտարկուած է մահմետականի մի հետ մէկտեղ , բաւական դժուարութեամբ միջոցը գտնելով զերկուսն ալ կ'ազատէ , և ինքը հետեւեալ օրը կը դառնայ ի Սուէզ ։ Աշխատութեան արժանի է Այժմ . Տիմոթէոս վարդապետի ազգասիրութիւնը և բարի նախանձը , և իւր սրբազան պաշտօնին մէջ ցոյց տուած անձնանուիրութիւնը զոր անշահասէր ոգւով կը կատարէ ի պատիւ սուրբ Աթոռոյս , չընդունելով և ոչ իւր ըրած ծախքը զոր յօժարութեամբ կ'ուզէին հատուցանել պանդուխտ ազգայինք . որոնք մեծ երջանկութիւն համարելով իրենց՝ սուրբ Աթոռոյս նուիրակաց հոն այցելութիւնը և արտասուալից աչօք իրենց շնորհակալութիւնը յայտնելով , կը յայտնէին միանգամայն իրենց սրտին ցաւը՝ զուրկ ըլլալով հոգեւոր առաջնորդէ մի , զոր Ճէգխարտէն կը յուսան , որ 7 ժամ հեռու է իրենցմէ , և տարին գոնէ երկու անգամ կրնայ գէթ քահանայի մի միջոցաւ անոնց հոգեւոր պէտքը մատակարարել ։

Ապրիլ ամսոյ 27 ին անգղիական շոգենաւով կը մեկնին ի Ճիտտէ ։

# ԿՐՕՆԱԿԱՆՔ

## ՍԱՄՈՒԷԼ ՌԱԲԲԻ ԵՒ ԻՒՐ ԳԻՐՔԸ

(Շարունակութիւն . տես Թիւ 4 .)

### ԳԼՈՒԽ Ը.

Թէ ինչ կերպով Քրիստոսի առաքեալներն յետոյ յուդայեցւոց Հրեաները ըստ մարգարէութեան Դատեցին .

Կը փափաքիմ, Տէր իմ, Թէ ո՞վ է Եսայի մարգարէին ըսած այն արդարն ու անմեղը . և ո՞վ է սորկով ծախուած արդարը , որոյ համար կ'ըսէ Տէր Ամոս մարգարէին ձեռօք՝ ինչպէս վերն ըսինք , Թէ չորրորդ ամբարշտութեան համար Աւետեաց երկիրն երբէք չէ-

digitised by A.R.A.R.@

պիտի դառնայ։ Կ'երեւի նաեւ, Տէր իմ, թէ Դանիէլի Թ. գլխոյն մէջ գրուածը կատարուեցաւ, ուր կ'ըսէ. «Վաթսուն երկու եօթնեկաց լմննալէն յետոյ պիտի սպաննուի Քրիստոսը. եւ այն ատեն պիտի գայ ժողովուրդը գալիք առաջնորդին հետ միասին, ու պիտի աւրէ քաղաքը, պիտի խորտակէ տաճարը ու խանգարէ զանիկայ, ու պիտի վերջնայ զոհը ու լյուի ապականութիւն յաւիտենական» (1). Ու տարակոյս չկայ, Տէր իմ, որ յաւիտենական աւերման ապականութիւնը այս գերութիւնն է, որու մէջ հազար տարի է կը գտնուինք։ Ու Աստուած մարգարէին ձեռքով յայտնի կ'ըսէ, թէ երբ որ սպաննեն Քրիստոսը, յաւիտենական աւերութիւն ըլլայ, ինչպէս է մեր աւերութիւնը Քրիստոսը սպաննելնէն ի վեր։ Ու Աստուած զմեզ յաւիտենական աւերութեամբն այն ժամանակ փախեցուց՝ երբ զՔրիստոսն սպաննեցին։ Ու եթէ ըսեմք՝ թէ Քրիստոսի մահուանէն առաջ անապատ ու աւերակ դարձանք մենք, առոր պատասխան կ'ուտան քրիստոնեայք, թէ անոր մահուանէն առաջ մեր աւեր ըլլալը միայն 70 տարի էր, և յետոյ Աւետեաց երկիրը դարձանք կրկին, ու Աստուած պատուեց զմեզ և իր շնորհքը մեզ տուաւ։ Յիրաւի, Տէր իմ, ես այս մարգարէութեանս դէմ՝ ընդդիմութիւն մը չեմ տեսներ. որովհետեւ գործքով կ'ապացուցանեն մեզ, թէ տաճարը կրկին շինուելէն յետոյ, երբ վաթսուն երկու եօթնեակները լրացան, այսինքն մարգարէութիւնը հրատարակուելէն վաթսունեւինն եօթը, այն է Դանիէլի նոյն եօթանասնեկի եօթնեկորդին չորրորդ տարին, այն ժամանակ սպաննեցին զՔրիստոս մեր հայրերը, այսինքն Բաբելոնէն ելլելուն 487 տարին, եւ աշխարհի ստեղծման 4036 տարին. եւ յետոյ եկաւ առաջնորդը, այսինքն Տիտոսն ու Հռովմայեցւոց ժողովուրդը. և այս մարգարէութեան մէջ լրուածները մեր գլուխը բերին, որ հազար տարի է հիմայ և քիչ մ'ալ աւելի։ Ու թէպէտ Աստուծոյ բարկութեան ներքեւն եմք, սակայն յոյս ալ ունիմք իրեն։ Ու եթէ ըսելու ըլլամք՝ թէ Քրիստոս դեռ չեկաւ, ալ պիտի գայ, և եթէ կրկին պիտի առնումք Աւետեաց երկիրը, և թէ քաղաքը նորէն պիտի շինեմք և Աստուծոյ շնորհքը և մեր երկրին մէջ պատիւը պիտի ունենամք, և թէ այս աւերութիւնը յաւիտենական չէ. կը պատասխանեն մեզ քրիստոնեայք թէ՝ ուրեմն Յիսուս Քրիստոս դեռ չսպաննեցիք, ու Տիտոսին և Հռովմայեցւոց ժողովրդեան գալստեանը կսպասէք, և այն աւերութեան՝ որ այս հազար տարուանէն աւելի վաղ է։ Աֆսոս ու եղուկ, Տէր իմ, վասն զի պատճառ մի չկայ, և ոչ յարմար պատուէն ու ապացոյց մի։ Այսու ամենայնիւ ինչ որ ալ պատահի Աստուծոյ եմք ամէն դէպքերու մէջ, թէ որ յուսամք իրեն։

(1) Եւթն յեա վաթսուն և երկուց եւթնեկորդացն, բարձցի օծութիւն. և իրաւունք ոչ իցեն ի նմա. և զքաղաքն և զսրբութիւն ապականեսցեն առաջնորդաւն հանդերձ որ գալոց է. և կոտորեսցին հեղեղաւ. և մինչև ի վախճան պատերազմին համառօտելոյ կարգեսցէ զապականութիւն. և զօրացուսցէ զուխտ բազմաց. եւթնեկորդ մի և կէս եւթնեկորդի. դադարեսցուսցէ զոհ զենմունս և զպատարագս. և մինչև ի ծայրս անկեանդրն ապականութիւն. և մինչև ցվախճան և ցառագնաց կարգեսցէ ի վերայ ապականութեանն. և զօրացուսցէ զուխտ բազմաց։ Եւթնեկորդ մի և կէս եւթնեկորդի բարձցին զոհք և նուէրք. և ի վերայ տաճարին պղծութիւն աւերածոյն կացցէ. և մինչև ի վախճան ժամանակի կատարած տացի ի վերայ աւերածին։ Դան. Թ. 24. 25.

## ԳԼՈՒԽ Թ.

### Թէ Քրիստոսի գալուստը երկու են.

Կը վախնամ, տէր իմ, չըլլայ որ Քրիստոս իր առջի գալուստն եկաւ ու

digitised by A.R.A.R.@

կատարեց․ որովհետեւ մեր գրքերուն մէջ անոր երկու գալուստ կը գտնեմք։ Առջի գալուստը մարգարէք կը նշանա-կեն խիստ աղքատ ու խոնարհ․ իսկ երկրորդը՝ փառաւոր ու մեծավայելչու-լուչ․ վասն որոյ եւ այլ երկու գալըս-տեան համար ինչ որ պատահեցաւ ասոր գրոց մէջ՝ հօս մէջ պիտի բե-րեմ։ Առաջին գալստեան համար կ'ը-սէ Աստուած Զաքարիայի բերանով․ "Ուրախ եղիր դուստր Սիոնի․ ահա քու թագաւորդ կուգայ աղքատ, և իշոյ վերայ հեծած »(1)։ Նոյն գալըս-տեան համար կ'ըսէ Եսայի զՄեսիա անարգուած, ու Դանիէլ՝ սպաննուած․ Զաքարիա ու Սիմէոն՝ ծախուած․ և ա-սոնք ամէնքն այլ կատարեցան ինչպէս ցուցըցի ու պիտի ցուցընեմ այս գրքիս մէջ։ "Զինքը բանի տեղ չսեպեցինք, չճանչցանք, ինչպէս Եսայի կ'ըսէ․ այլ անտես ըրինք և անարգէ աւելի զզուա-ցանք »(2)։ Իսկ նորա փառքն ու մեծ-վայելչութիւնը երկրորդ գալստեանը յայտնի կ'ըլլայ, երբ կրակ ու բոց ա-նոր դիմացէն կ'երթայ ու կ'այրէ կը մրկէ չորս դին եղող նորա թշնամիքը, ինչպէս որ Դաւիթ և Եսայեայ մար-գարէի բերանով ըսաց Աստուած․ (Սաղմ․ ՂԶ․ 3։ Եսայ․ ԽԲ․ 4)։ Ես կը փախեմ, Տէր իմ, չըլլայ որ Քրիս-տոս մահուան կրակով և ոչ ուրիշ կերպով դատելու ըլլայ զմեզ․ վասն զի մեք սպաննեցինք այն մարգարէները որ նորա համար մեզ աւետիս տուին․ ինչպէս Աստուած մեզի դէմ Եղիա մարգարէին բերնով կը վկայէ ըսելով թագաւորութեան գրքին մէջ (1)։ Այս-պէս սպաննեցինք այն արդարը, որոյ համար Աստուած անխախտան բարկու-թեամբ բարկացաւ մեզ։ Սակայն Աս-տուծոյ եմք ամէն դէպքերու մէջ, թէ որ անոր յուսալու ըլլամք։

Ի յոՂՐՏՆ ։

(1) Ուրախ լեր յոյժ դուստր Սիոնի․ քարոզեա դուստր Երուսաղեմի․ ահա թագաւոր քո գայ առ քեզ․ արդար և փրկիչ․ նոյն հեզ և հեծեալ ի վե-րայ իշոյ և յաւանակի նորոյ։ Զաքա․ Թ․ 9։

(2) Այս վկայութիւնս չկայ մեր թարգմանու-թեանց մէջ։ Եւ ԾԳ․ 3 գլուխը․ ստ միայն կը գըտ-նեմք․ "Դարձուցեալ զերեսս իւր անարգեցաւ, և ոչ ինչ համարեցաւ »։

(1) Այս խօսքս Դ․ թագաւորութեանց մէջ չէ-կայ․ այլ Գ․ թագաւորութեանց ԺԹ գլուխ ու 10 համարին մէջ այսպէս կ'ըսէ, "Եւ զմարգարէս քո կոտորեցին սրով »։

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ներկայ ամսոյս 2 և 8 ին երկու անգամ հայկերութի հանդէս տեղի ունեցաւ։ Առաջինը տեղւոյս Վսեմ․ Ախա փաշայի կողմէն առ բոլոր զին-ուորական դասս, ուր հրաւիրուած է-ին նաեւ Իսլամաց աւագանիքն ու Վսեմ․ կառավարիչ Նազիֆ փաշայն։ Իսկ երկրորդը՝ որ միրալայ Ալի պէկին կողմէն տրուեցաւ, աւելի հանդիսա-ւոր էր և արժանի նշանակութեան։ Բանակի բաց ի զօրաց գնդերէն ու զին-ուորական պաշտօնեաներէն՝ յատկա-պէս հրաւիրեալ էին նաեւ Պատրիար-քունք և Հիւպատոսք։ Այսու ամե-նայնիւ առաջինները անձամբ չկրնալ երթալնուն, և միրալայ Ալի պէկին հրաւէրը սիրով ընդունելով, իրենց կողմէն երեք վանքերն ալ թարգման-ներն խրկեցին։ Հայկերութի համար ո-րոշուած տեղն էր Դամասկոսի կոչ-ուած դրան կողմը հարթ դաշտակի մը մէջ՝ վրաններու տակ՝ ուր երեւելի կոչ-նականաց համար երկու սեղան զար-դարուած էր․ առաջին սեղանոյն նա-խագահ էր Վսեմ․ Նազիֆ փաշայն, Ախա փաշայն, Մեծ․ Հիւպատոսք՝ իրենց մարգպէտներովը և Արժ․ երեք թարգմանք։ Սուրբ Աթոռոյս կողմէն գնացողն էր առաջ թարգման Արժ․

և բարեջան Ներսէս վարդապետին, որ այսպիսի պարապմանց մէջ խիստ պատուաւոր և արժանաւոր կերպով ներկայացընող է սուրբ Աթոռս և զերին Ամէն. Սրբազնութիւնը: Երկ-րորդ սեղանին նախագահ էր մեծարոյ Միւֆթին և քաղաքիս ուլամաները՝ ուրիշ նշանաւոր կրօնականներով: Այն հացկերութիւն համար պատրաստուած ուրիշ կերակուրներէ և անուշեղէններէ ի զատ գլխաւոր սեղաններն էին 75 հատ խորոված գառ: Սեղանէն առաջ զօրապետը զօրաց կրթութեան հան-դէս մի ներկայացուց, որոյ մէջ այնքան ճարտարութիւն, դիւրաշարժութի և զինուորական կարգեր ու հնարքներ ի գործ դրին, մինչեւ անգամ զարմացը-նել զեւրոպացիները՝ որ ներկայ էին հոն: Ասկէ ի զատ ուրիշ մարմնոյ վար-ժութեան և տեսակ տեսակ խաղեր եւս կատարուեցան: Սեղանի և ուրիշ ժամանակ միջոց առ միջոց ընտիր ու քաղցր եղանակներ կը հնչուէր զինուո-րական նուագաց: Այսպէս վերջացաւ այն ուրախութեան հանդէսը ի մեծ գոհութիւն բոլոր հրաւիրելոց, և ի պատիւ մեծարոյ Ալի պէկին:

— Անցեալ ամսոյն 21 ին առ Աս-տուած փոխեցաւ Եգիպտոսի Առաջ-նորդ Գեր. Գաբրիէլ Ս. Արքեպիսկո-պոսը ի խոր ծերութեան, որոյ մահը ոչ միայն իւր սիրելի ժողովուրդին. այլ և բոլոր միաբանութեանս սրտին մեծ սուգ և տրտմութիւն պատճառեց:

Հանգուցեալ Սրբազանը գրեթէ 35 տարիի չափ առաջնորդութեան պաշ-տօնը վարեց: Ինքը սուրբ Աթոռոյս հարազատ միաբաններէն էր: 1832 ին երբ լուսահոգի Կիրակոս եպիսկոպոսը սուրբ Աթոռոյս նեղ ժամանակին Ե-գիպտոսի առաջնորդութենէ ետ կան-չուեցաւ ուրիշ աւելի կարեւոր պաշ-տօն յանձնելով իրեն, իւր տեղը Գաբրիէլ եպիսկոպոսը խրկուեցաւ որ դեռ վարդապետ էր, իբրեւ արժա-նաւորագոյն նոյն վիճակին առաջնոր-դութեան: Հոն հասնելուն սկսա-ւ ամենայն ջանքով խնամք և հոգ տանիլ իւրեան յանձնուած ժողովրդին պիտա-յիցը և սուրբ Աթոռոյս կալուածոց: Իւր գլխաւոր ձեռնարկութիւններէն մէկն եղաւ սուրբ եկեղեցւոյն շինու-թեանը ձեռք զարնել՝ կանխաւ հրա-ման խնդրելով լուսահոգի Պօղոս Պատ-րիարքէն, որ սուրբ Աթոռոյս պար-տուց ազատութեանը համար ազգին հաճութեամբը հոգաբարձու ընտր-ւած էր: Մէկ կողմէն եկեղեցւոյն շի-նութեան և միւս կողմէն սուրբ Ա-թոռէն հետզհետէ խրկուած գումար-ներով և այն տեղ գտնուած կալուա-ծոց վարձքերէն սուրբ Աթոռոյս հնա-ցեալ տուները կը նորոգէր, և նորէ նոր տուներ ծախու կ'առնէր, ինչպէս նոյնը բրած է նաեւ իւր նախորդը Կի-րակոս եպիսկոպոսը: Իւր գործունէու-թիւնը և աշխատութիւնը և ժողո-վրդասէր բարքը տեսնելով նոյն ժա-մանակի ազգային երեւելիները, հան-գուցեալ Եուսուֆեան Պօղոս պէկի, Եղիազարեան մահտեսի Աբրահամ ա-ղայի և Խաչերեան մահտեսի Մէքրոպէլ աղայի յատուկ մէկ նամակով (գրու-եալ ի 1 յունուարի 1839) կը խնդրեն Պօղոս Պատրիարքէն, որ շնորհք ընէ նորա եպիսկոպոսութեան համար իւր հաճութիւնը և վկայագիրը խրկելու, այն պայմանաւ՝ որ եպիսկոպոսութիւնը ընդունելէն յետոյ կրկին Եգիպտոս դառնայ, “առ ի վայելել, ինչպէս կը գրեն նամակին մէջ, յերախայրից պտու-ղոյ իւրոյն աշխատանաց, այն է օծել զեկեղեցին„: Պօղոս Պատրիարքը եւ իւր խորհրդականն սուրբ Հարք Եգիպ-տոսի բարեսէր ու բարեպաշտ ժողո-վրդոց, մանաւանդ մեծամեծ և իշ-

digitised by A.R.A.R.@

խանուող Պօլսոյ մէկի խնդիրքը սիրով ընդունելով՝ անմիջապէս վերագիրը կը խրկէն Գաբրիէլ վարդապետին, որ քիչ ժամանակէն ի Սիս երթալով յունիսի 15 երորդ օրը ի Տէր հանգուցեալ Մխիթարէ Կաթողիկոսէն կ՚ընդունի Եպիսկոպոսութեան բարձրագոյն աստիճանը, և կրկին Եգիպտոս դառնալով՝ ժողովրդեան հոգեւոր փափաքը կը կատարէ նորաշէն եկեղեցին օծելով։

Նոր ժամանակ սկսած էր Եգիպտոսի ազգայնոց մէջ ուսումնասիրութեան նոր եռանդ մի արծարծիլ. կարգաւորեալ դպրոցաց հաստատութե̃ փոյթ տանիլ. և որովհետև այսպիսի ձեռնարկութիւններ բաւական ստակի կարօտ էին, չուզելով Ս. Աթոռոյս սեփականութե̃ցը վնասել, որոնց արդիւնքը սահմանուած էր միաբանութեան պիտոյիցը համար Եգիպտոս գտնուած բերքերէն գնելու, վան որոյ սկսան այն ժամանակէն յատուկ սեփականութեան տէր ըլլալ, եկեղեցւոյ վակըֆներ գոյացնել, օրէ օր աւելցնել, և անոնցմէ եղած արդիւնքը թէ եկեղեցւոյ, թէ դպրոցաց և թէ ուրիշ ազգային հարկաւոր պիտոյից անօրինել. որոնց համար յատուկ արձանագրեր ու հաշուէտումարներ հաստատուեցան առանց խառնելու Ս. Աթոռոյս սեփականութե̃ց արդեանց և ծախուց տումարներուն հետ, ինչպէս է մինչեւ ցայսօր։ Ազգային երեւելիները այն ժամանակէն սկսեալ մինչեւ ցայսօր մեծ փոյթ ու խնամք ունեցած են Եգիպտոսի ազգային կալուածոց արդիւնքը շատցնելու և Ս. Աթոռոյս օգնութեանը կարօտ չմնալու համար՝ վակըֆները աւելցնել շնորհիւ բարեխնամ կառավարութե̃ Եգիպտոսի, որ ժամանակ առ ժամանակ մշակուելու բաւական երկիրներ գարգեւած է, որոնց արդիւնքովը կրնայ ոչ մէկ՝ այլ երկու և երեք գըլրոյներ կառավարուիլ խոհական տնտեսութեամբ, և յառաջացածէն աւելի յառաջադիմութիններ ձեռք բերել, ապա թէ ոչ՝ առ որ Ս. Աթոռոյս ունեցած արդիւնքն ալ նոյն ճամբուն ծախս ըլլալու ըլլայ, դարձեալ քիչ է, և դարձեալ մի եւ նոյն վիճակին մէջ կը մնայ ժողովուրդը։

Գաբրիէլ Եպիսկոպոսն իւր հայրական խնամատարութեամբը բոլոր ժողովրդին սիրելի ըլլալով՝ իւր խօսքը միշտ անոնց քով ազդեցութիւն գտած էր, և անոնց այս օրինակ ուսումնասէր և ազգասէր ձգտմանցը մեծապէս ձեռնտու եղած էր։ Իւր անոյշ և գեղջ բնաւորութեամբը Պօլսոյ մէկի և ուրիշ երեւելի ազգայնոց համակրութիւնը ստանալէն ի զատ, սիրելի էր նաև տեղական կառավարութե̃ աչքին և շատ պաշտօնութիւններ և շնորհքներ անկէ վայելած։ Այսպէս իւր ծերութեան վերջին տարիները նոյն սէրն ու համակրութիւնը գտաւ նաև Վսեմափայլ և ազնուածնունդ Նուպար փաշայէն, որու աշխարհածանօթ ազգասիրութեան խնամքը ոչ միայն եգիպտական ժողովուրդը, այլ և գրեթէ ընդհանուր ազգը կը վայելէ. նոյն ազգասէր և ջերմեռանդ զգացմունքներովը յոյս ունի և առըր Աթոռս վայելելու Նորին Վսեմութենէն, որուն արդէն կը նուիրէ միաբանական Ուխտս ջերմ՝ բարեմաղթութիւններ և բազմապատիկ հատուցմունք ի Տեառնէ իւր բարենպաստ առատաձեռնութեանցը։

Կը վերջացընեմք խօսքերնիս՝ խընդրելով յաւիտենական հանգիստ հոգւոյ հանգուցեալ Սրբազան Հօր, և արժանաւոր յաջորդ մը՝ ի մխիթարութիւն իւր որբացեալ սիրելի ժողովըր-

digitised by A.R.A.R.@

դոյ Եգիպտոսի և Աղեքսանդրիոյ ։

— Ապրիլի 30 ին աշխարհամատրան կիւրակէին սուրբ Աթոռս աթոռութիւնի հանդիսաւոր պատարագ մատուցանել կենսատու սուրբ Գերեզմանին վերայ, ինչպէս և Զատկի ութօրէից կիւրակին եւս յոյնք կը պատարագեն հանդիսապէս ։ Սոյն առթիւ Սրբազան Պատրիարք Հայրը Ժառանգաւորաց դպրոցի 10 աշակերտաց դպրութեան աստիճան տուաւ սուրբ Գերեզմանին դիմաց ։ Սուրբ Աթոռս աթոռութիւնունի այսպիսի կարգեր ու ձեռնադրութիւններ սուրբ Յակոբայ մայր եկեղեցւոյ մէջ կատարելու . իսկ Լատինք և Յոյնք իրենց մասնաւոր եկեղեցեաց փոքրութեանը պատճառաւ ասոր են միշտ սուրբ Գերեզմանին դիմացը կատարել ։ Յայտնի է ազգայնոց որ այսպիսի արարողութիւնները կատարելը որ և է սուրբ տեղւոյ մի վերայ՝ իրաւունք կը համարուի ։

— Սուրբ Զատկէն ՚ի վեր է սուրբ Աթոռոյս նորաշէն դեղարանը բացուելով՝ յանձնուեցաւ Բիթայնեան արժանայարգ Պ. Սահակին, որ յատուկ բժշկութեան համար բերուեցաւ Պօլսէն . և առ այժմ դեղագործութիւն ալ պիտի կատարէ մինչև աշակերտ մի հասցնելը, որ արդէն քաղաքացի հայ տղայ մի տրուեցաւ իրեն աշակերտութեան ։ Միաբանութիւնս խիստ գոհ է յիշեալ բժշկին քաղցր բնաւորութենէն և իւր կրկին արհեստին մէջ ունեցած հմտութիւններէն ։

— Յերուսաղէմ քննութեան համար եկող Թէֆթիշճի Վսեմ. Իպրահիմ փաշային անդամս երէքին մեռաւ թեթեւ հիւանդութենէ մի յետոյ, որոյ համար կ՚ըսուի թէ եկած ժամանակ եւս տկարութիւն ունէր ։

## ՆՈՒԻՐԱՏՈՒՔ

Սուրբ Աթոռոյս Թանգարանի վերատեսչութիւնը պարտք կը համարի հրապարակաւ իւր շնորհակալութիւնը մատուցանելոյ հետագայ բարեսէր ազգայնոց, որոնք յօժարեցան իրենց քով գտնուած թէ հնութիւններ և թէ ձեռագիր մատեանները Թանգարանիս նուիրելու, որոնց անուանքը առ ՚ի յիշատակ յաւիտենական կ՚արձանագրեմք ամսաթերթիս մէջ ։

Գեր. Անդրէաս Սրբազան արքեպիսկոպոսը Վեհապետեան շնորհեց Անի քաղաքին հնութիւններէն մնացորդ չորս կտոր քանդակուած քարինք, ագուցեալ քառակուսի ընկուզի փայտէ փորագրաշէն պատուանդանի վերայ ։

Թէքիրտաղու Առաջնորդ Գեր. Թադէոս սրբազան արքեպիսկոպոսը նուիրեց երկու կտոր գիրք հին նօտրագիր տառերով . առաջինը կը պարունակէ քարոզք ու զանազան նիւթեր ։ Իսկ երկրորդը անթիւ և անհամար և ամեն ազգի նիւթերու վերայ կը խօսի (Miscellanées) այսինքն խմաստասիրական, աստուածաբանական, քերականական, բնական, բժշկական, բարոյական, ձայնական, գաղտնաբանական, մեկնական, հայկական խաղերու, եւայլն եւայլն . նօտրագիր՝ ամենամանր տառերով հոծ և խիտ գրուած բամբակեայ նուրբ թղթի վերայ . կը պարունակէ 1063 էջ ։

Տէր Գասպարեան զմիւռնացի մեծայարգ Պ. Կարապետը նուիրեց Թովմայի Ակուինացւոյ Հոգեւոյ և Հրեշտակաց բառած գիրքը, նօտրագիր մաքուր, անթուական ։

Եդեսիոյ Խաչանիկար սուրբ Աստուածածնի եկեղեցին՝ նուիրեց նոյն եկեղեցւոյ լուսարար Գալէան Տ. Սար-

գիս բարեկրօն քահանայի ձեռօք՝ բո-լորագիր Մաշտոց մի գրեալ 1338 թը-ւոյն :

Եդեսացի մահտեսի Գրիգոր Նու-րեկեան՝ նուիրեց մագաղաթեայ ու բոլորագիր Մաշտոց մի 1661 ին գրը-ուած ի Հալէպ :

Գեր. Յովհաննէս ծայրագոյն վար-դապետն տէր Պօղոսեան տիգրանա-կերտցի, տեառ Երզնկա բարձրահայ-եաց սուրբ Աստուածածնի վանաց՝ նը-ւիրեց երկաթագիր ու մագաղաթեայ Աւետարան մի փոքր 1287 թուակա-նէն շատ յառաջ գրուած .

Գեր. Պաղտասար ծայրագոյն վար-դապետն տիգրանակերտցի նախորդ Առաջնորդն Չնքուշի՝ նուիրեց յիշա-տակ՝ Ներսէսի լամբրոնացւոյ մեկնու-թիւնը Սաղմոսաց, Ժողովողի և Իմաս-տութեան գրոց, բոլորագիր և բամ-բակաթուղթ, 1329 ին գրուած ի Վա-յոց ձոր, ի տէրութեան իշխանաց իշ-խանին պարոն Պուրթէլի, և ի վար-ժապետութեան Եսայեայ հռետորի Նչեցւոյ :

Տիգրանակերտու սուրբ Սարգսի եկեղեցւոյ կողմէն Տօնական մի բոլո-րագիծ ու բամբակաթուղթ, գրեալ 1476 թուոյն :

Ականեփորիկ մի բոլորագիր ու նօտ-րագիր խառն, Կեսարիա գրուած 1674 ին :

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Մօտերս Պօլսոյ աննշան տպարանի մի մէջ տպուած գիրք մի տեսանք, «Պատկեր Հայաստանեայց Լուսաւոր-չական սուրբ եկեղեցւոյ» կոչուած, որ ուրիշ բան չէ՝ եթէ ոչ խառնուրդ մի Հայոց ուղղափառ եկեղեցւոյ ծի-սական գրոց՝ Ժամագրքին, Շարակա-նին եւայլն, յապաւելով նոցա մէջէն շատ մի պարբերութիւններ և ուրիշ օտարախորթ հատուածներ աւելցնե-լով հակառակ հոգւոյ սուրբ եկեղեց-ւոյս. ուստի իրաւամբք կրնանք կոչել զայն բողոքականութեան վարագուր-եալ ընդ անուամբ Լուսաւորչի :

Յիշեալ գրքին Հայոց եկեղեցւոյ ծէսերուն եւ աւանդութեանց ներ-հակ և անընդունելի ըլլալը փութա-ցին բոլոր ազգային լրագիրները և հանդէսները հրատարակել՝ մէջ բերե-լով Պօլսոյ Պատրիարքարանի կողմէն խրկուած պաշտօնական ծանուցումը, զոր հոս կը դնենք մէք ալ :

«Պաշտօնական ծանուցում : 1866 թուա-կան կրող պատկեր Հայաստանեայց Լուսաւորչական սուրբ եկեղեցւոյ ա-նունով գիրք մը հրատարակուած տես-նուեցաւ այս օրերս Տիկիթճեան Թա-դէոսի տպարանէն ելած : Յայտ է մեզ տեսնել, որ անոր անունէն հեռացա-կը մեր եկեղեցական գրեանքը. Մաշ-տոցը, Խորհրդատետրը, Ժամագիրքը, Շարականը և Տաղարանը ըստ քմաց աղաւաղելով, այսինքն պակսեցնելով, աւելցնելով, փոփոխելով և կրճատե-լով իր վրայ կրած անունին բոլորովին հակառակ Ս. Լուսաւորիչ Հօր վար-դապետութիւններէն եւ աւանդու-թիւններէն բոլոր ամենայնի օտար և հեռու, աւելի մոլութեանց պատկեր մը կը ներկայացնէ :

Այս գիրքը ըստ ինքեան դատա-պարտեալ ըլլալով՝ ի պաշտօնէ պարտա-ւորեալ կը զգուշացնենք Ս. Լուսա-ւորիչ Հօր հարազատ զաւակները, որ անոր կեղծ և պատրուակեալ անունէն չխաբուելով՝ մերժեն և արհամարհեն զայն իբրև մոլութեանց խմորում մը» :

5 Ապրիլ 1867

Ի Պատրիարքարանս Հայոց (Կնիք)

Կ. Պոլիս :

## ՕՐԱՑՈՅՑ
## 1868
ՆԱՀԱՆՋ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ



digitised by A.R.A.R.@

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

# Ի

# ՄԻՕՆ

ԹԻՒ 5, 31 ՄԱՅԻՍ 1867

## ԶԵՅԹՈՒՆՈՒ ԵՐԵՔ ԻՇԽԱՆԱՑ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Հայ լրագիրք փութացին ուրախութեամբ հրատարակել հաստատութեան Զէյթունու մնացեալ երեք իշխանաց վերադարձը, որոնք իրենց քաղաքական նեղ վիճակէն ազատեալ Հռովմէական հայոց եպիսկոպոսարանէն օգնութիւն գտնելու յուսով կրօնափոխութեան դիմած էին։ Յիշեալ լրագիրք անոնց վերադարձին պատճառ կ'ենթադրեն իրենց յուսացած օգնութիւնը չգտնելնին, որ կերպիւ մը մարդկային անձնասիրութեան դպչել թուի է։ Մենք անոնց կարծեաց համամիտ չեմք յայսմ մասին. յուսահատութիւնը չէր զիրենք կրկին իրենց մայրենի եկեղեցւոյն ծոցը դարձնողը. իրենց անձկալութիւնը Գեր. Հասունեանին վրայ էր. և որովհետև նա դեռ դարձած չէ իւր ուղևորութենէն և հաւանական է որ կարենար նա պատկել անոնց խղճն ու անձկալութիւնները որով և իցէ կերպիւ. ուստի յիշեալ յարգոյ իշխանաց վերադարձն ուրիշ շարժառիթ պիտի ունենայ անշուշտ։

Եթէ պահ մի մտածելու ըլլամք Զէյթունու ժողովրդեան կրօնական զգացմունքը, նոցա իրենց մայրենի Եկեղեցւոյն ո՛ր աստիճանի սիրո կապով մի կապուած ըլլալը, նոցա ի մանկութենէ ծծած հոգևոր կաթին անարատութիւնը, շուտով պիտի հասկնամք որ աշխարհային և մարմնական դէպք մի որքան ալ սաստիկ ծանրանալու ըլլայ նոցա մտքին ու սրտին վերայ, և մինչև կրօնական ուրացութեան վտանգի մէջ ալ ձգելու ըլլայ, եթէ միջոց ունին պահ մի առանց կրից և խիղճերնենուն ամփոփուած մտածելու մայրենի Եկեղեցւոյ գութն ու գորովը, որով իրենց հոգին մնաւ և ուսկէ ընդունեցին իրենց հոգեկան կեանքը, փոխարէն տալով անոր իւրեանց հաւատքը իբր գրաւական, անհնարին է որ Կիլիկիոյ բնակիչ մը, Ռուբինեան հարստութենէ մնացեալ ժողովուրդ մի չզգայ իւր սրտին մէջ նոյն գորովին արժէքն և շնորհապարտութեան զգացում մի։ Այս է անշուշտ վերյիշեալ



digitised by A.R.A.R.@

Զէյթինցի երեք իշխանաց վերադարձին գլխաւոր շարժառիթը, և ոչ թէ անձնական օգնութիւնն և պաշտպանութիւնը չգտնելնին յառաջ եկած յուսահատութիւնն է, ինչպէս կարծած են ազգային լրագիրք ։

Երկրորդ շարժառիթ և պատճառ նոյն վերադարձին կը համարձակիմ այսօր ընդհանուր ազգիս գիտոյն յայտնելով ըսել՝ թէ սուրբ Աթոռն և նորա Ամենապատիւ Աթոռակալն եղած է ։ Սուրբ Աթոռս՝ որ ազգային արդի տխուր և տարաժամեան վիճակին վերայ կարեկէր փնտռելով կը մտածէր, մանաւանդ գաւառական անիծեալ և անօրէնուն՝ ժողովրդոց յուսահատութենէ կրօնափոխութե գիտելնին տեսնելով՝ իրեն սրտին քրտանցի կսկիծ եղած է, չկրցաւ անտարբեր աչօք նըկատել Զէյթինցւոց ամենց ի հաւատականութիւն գիտելնին. և նոյն օրէն ի վեր կը մտածէր միջոց մի գտնել իւր ջանքերն ի գործ դնելու՝ կրկին զիրենք իրենց մայրենի Եկեղեցւոյն գիրկը դարձնելու համար ։ Իւր ջանքերն պարապ չելան, սրբոյն Գրիգորի աղօթիցն ու բարեխօսութեանը վստահացած՝ կըրցաւ ձեռք բերել աստուածային յաջողութեամբ իւր ցանկացած նպատակը. ինչպէս որ Պոլսոյ լրագիրք և մեր փոխանորդարանին կողմէն կ'իմացընեն մեզ ։

Ահաւասիկ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր գտած միջոցը ։ Մահտեսի Յովակիմ անուն Զէյթունցի կարիճ ջերեպանը, որ ամէն տարի Ս. Աթոռս կու գայ ջերեպանութեան գործքով, այս տարի դարձեալ եկած ըլլալով, և Ամեն. Սրբազանը նորա բարեպաշտութիւնը և գործունէութիւնը և իւր քաղաքակցաց քով ունեցած մեծ ազդեցութիւնը լաւ գիտնալով, կը կանչէ իւր քովը, և իւր միտքը կը յայտնէ անոր ։ Յովակիմ թէպէտ և կը խոստանայ Սրբազան Հօր խնդիրքը Աստուծոյ օգնութեամբը յաջողութեամբ կատարելու կարող ըլլալը, սակայն Պոլիս ճանապարհորդելու համար կարեւոր ծախուց ձեռքը բաւական չըլլալն ալ կը յայտնէ ։ Ամեն. Պատրիարքը ոչ միայն նորա ճամբու ծախքը, այլ և իւր այս առաքինութիւնը և հայրենասիրական եւ աստուածահաճոյ աշխատութիւններն ալ վարձատրել խոստանալով կը խրկէ զինքը ի Կ. Պոլիս զկնի սուրբ Զատկի ։

Յիշեալ երեք իշխանք մահուանէ Յովակիմի բարի յորդորանքներովը ազգային Եկեղեցւոյ ծնողական գութն ու բարիքները յիշելով, և անկէ իրենց ծծած հոգեւոր կաթին հարազատ մնալու պարտաւորութիւնը զգալով, մանաւանդ յիշելով Առաքելոյն խօսքը, թէ յոր կոչումն կոչեցար՝ ի նմին կացցես, կը վերադառնան կրկին ի հնազանդութիւն Լուսաւորչական ուղղափառ մը Եկեղեցւոյս ։ Պոլսոյ սուրբ Երուսաղէմի փոխանորդարանը ինչպէս նախ ի պատիւ Ազգին զիրենք շահած էր ամիսներով սուրբ Աթոռոյս ծախքովը կերակրելով, նոյնպէս հիմայ թէ ի պատիւ Ազգիս և թէ ի շնորհս Զէյթինու օրհնեալ ժողովրդոց և յիշեալ երեք յարգոյ իշխանաց բազկատարած կ'ընդունի զիրենք, և պիտի շահի հոգեւորապէս՝ որչափ ժամանակ որ հարկ ըլլայ մնալ ի Պոլիս ։

Այսու ամենայնիւ Ազգ. Վարչութիւնը և Պատրիարքական իշխանութիւնը անշուշտ իրենց պարտաւորութիւնները ճանչնալով և անոնց վերադարձը յուսահատութեան հետեւանք չհամարելով, պիտի փութան՝ ինչպէս կը յուսամք, հայրաբար իրենց խնամքն նոցա ցոյց տալ, և իրենց ազդեցութիւնը ի գործ դնելով՝ Զէյթինու օրհնեալ և

digitised by A.R.A.R.@

բարեմիտ ժողովրդոց միմեանցն բառ կարի օգնել, որչափ որ կը ներեն ներկայ ժամանակիս պահանջմունքները ։ Այս կերպով կը յուսամք որ նոցա կրօնափոխութեան դիմելնին առաջին և վերջին կ՚ըլլայ . ապա թէ ոչ՝ յետինն լինի չար քան զառաջինն , զոր Տէր մի արասցէ ։

Մահտեսի Յովակիմի ազգասիրական գործը նշանաւոր է և արժանի ամենայն պատուութեան . իւր ուրիշ մէկ բարութիւնը յաջորդ թուով կը խոստանամք հրատարակել ։

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

### Պաշտօնափոխութիւնք ։

Սուրբ Աթոռոյս անուշական պաշտօններու մէջ ներկայ ամսույս եղած փոփոխութիւնները հետեւեալներն են ։

Սուրբ Ծննդեան վանաց տեսուչ Արժ . Աբրայիմ վարդապետին յաջորդեց Արժ . Կիրակոս վարդապետը Կելիպօլցի ։ Ռամլէի սուրբ Գէորգայ վանաց տեսուչ Արժ . Յովհաննէս վարդապետին տեղ ընտրուեցաւ Արժ . Խաչեր վարդապետը Մխիթարեան ։ Սուրբ Աստուածածնի գերեզմանի տեսչին տեսուչ Արժ . Ստեփան վարդապետին Ադրիանուպոլսեցւոյ յաջորդեց Արժ . Բարդուղիմէոս վարդապետը Սամաթիացի ։ Արժ . Եփրեմ վարդապետին , որոյ վերայ է վանքի խոհանոցին տնտեսութիւնը և չնուածոց վերակացութիւնը , իրեն յանձնեցաւ նաեւ ճոխանէից տեսչութիւնը՝ փոխանակ Կիրակոս վարդապետին ։ Իսկ միացեալ տեսչութիւնները , այն է Դամասկոսի , Պէրութի , Յոպպէի , Լադիկիոյ և Կիպրոսի եկեղեցեաց , մնացին դարձեալ իրենց նախորդ տեսչաց վերայ ։

— Քաղաքիս կայսերական բանակին զօրագլուխ Վսեմ . Լիվա փաշայի , և Միրալայ Ալի պէկի տուած զինուորական հացկերութի նկարագրութիւնը՝ զոր մայիս ամսոյ մէջ հրատարակեցինք , ի խնդրոյ ամենց բաժանորդաց քաղաքիս անոր գաղղիերէնն ալ այս անգամ Յաւելուածիս մէջ կը փութամք հրատարակել ։

A l'occasion d'une revue militaire.

Son Excellence Liva Pacha et Miralay Ali-Bey ont donné des banquets aux troupes impériales stationnées dans notre ville. L'un a eu lieu aux 14 du mois courant (Mai), et l'autre six jours après. Le festin donné par M. Miralay a été surtout éclatant; car outre le corp militaire, et les personnes dignitaires politique et religieux de l' Islamisme, y ont été aussi invités les Consuls d s Puissances européennes, avec leur suite, et les Chefs des Communautés chrétiennes. Ceux-ci ont été représentés par leurs Dragomans. Les banquets été préparés hors de la porte de Damasque, sur des gazons fleuris et verdoyants, où étaient dressées des tentes pour le corps dignitaire. Il y avait préparé deux tables, l'une pour les Chefs des Communautés chrétiennes, et pour Mess. les Consuls, où présidait S. Exc. Nazif Pacha, et l'autre pour les Efendi et pour les notables de la ville, étant le premier siége occupé par le Mufti. Avant de se mettre à table, a eu lieu un exercice militaire, aussi magnifique, que frappant, dans lequel les troupes Ottomanes ont donné des preuves de leur adresse et habileté. Beaucoup de monde y assistait; et cette solennité contribua à augmenter la considération et l'estime de tous pour Mess. S. Excellence Liva Pacha et Miralay Ali-Bey.

— Le Dragoman du Couvent Latin M. Pio d'Alonse, en récompense de ses bons services, a reçu recemment deux décorations. Une de l'ordre des S[ts] Maurice et Lazar du Gouvernement Italien; et l'autre de l'Autriche, savoir, la Croix d'or du mérite de l'Empereur François Joseph. Les deux décorations lui ont été conférées avec solennité, et satisfaction de tout le monde.

— Նախընթաց թուով խոստացինք Թէֆթիշճի Վսեմ . Իբրահիմ փաշայի մահը , որ յառաջագոյն խրկուած էր քաղաքիս նախորդ կառավարիչ Իզզէթ փաշայի գործոց քննութեանը համար Նորա մահուան լուրը հեռագրաւ

digitised by A.R.A.R.@

Պօլիս գրուած ըլլալով. Վսեմ. Ռիւշտի փաշային խրկուեցաւ քննութեան գործը շարունակելու համար ։

— Լրագրական մի նորընտիր կառավարիչ Վսեմ. Նազիֆ փաշային եկած օրէն ի վեր է իւր պաշտօնին պարտուպատշաճ եղած ծառայութիւններ ի գործ դնելու տրամադիր կը գտնուի ։ Արդէն զանազան բարեկարգութեանց եւ քաղաքիս օգտակար համարուած այլ եւ այլ կանոններու ծրագիր մի յօրինած է ինքը, եւ զանոնք ի գործ դնելու համար կը խորհի յանձնաժողով մի կազմել, եւ ծրագիրը անոր յանձնելով եւ նորա խորհուրդն ալ ընդունելէն յետոյ գործադրութեանը ձեռնարկել ։ Յիշեալ բարեկարգութեանց մէկը եւ կրնամ՝ ըսել գլխաւորը պիտի ըլլայ ուրկանոցին (միսկինլիք) փոխադրութիւնը ։ Անիկայ քաղաքիս հարաւային կողմը կ'իյնէ պարսպին մէջ, Փրկչայ կամ՝ Սիոնի բացուած դրան քով, եւ որ Յակոբայ մեծ վանքին ետեւն է ։ Ուրկանոցին տեղը սուրբ Աթոռոյս սեփական ստացուածք է. այսու ամենայնիւ Ամենապատուութեանս թախանձանօքը նախորդ կառավարութեանց ժամանակ քանի մի անգամ՝ փորձ փորձուեցաւ քաղաքէն դուրս ուրիշ տեղ մի փոխադրել զկէնք, սակայն չյաջողեցաւ ։ Այս անգամ՝ եթէ յաջողելու ըլլայ, մեծ բախտութեան եւ մարդասիրութեան գործ պիտի համարի եւ սրտանց Ն. Վսեմութեան անուանը ։ Աւելորդ է մեզ այսպիսի ձեռնարկութեանց եւ ջանից համար գովեստներ հիւսել, կը թողումք որ ժամանակին ինքը պսակէ Ն. Վսեմութեան ջանասիրութիւնները, եւ գործադրութիւնը իրենին գովութիւն կը համարի. այսու ամենայնիւ եւ մեք մեր պարտաւորութիւնը կատարած կ'ըլլամք ի ժամանակին ծանուցանելով զանոնք հասարակութեան ։

— Լատին միաբանութեան վանքին Թարգման Արք. Պիօ տ'Ալմաօ իւր հաւատարիմ ծառայութեանցը փոխարէն մօտերս երկու տէրութեանց կողմէ պատուոյ նշաններ ստացաւ ։ Առաջինը Իտալիոյ տէրութեան Ս. Մաւրիկոսի եւ Ս. Ղազարու կարգին նշանը. երկրորդը Աւստրիոյ կայսեր Ֆրանչիսկոս Յովսէփայ ոսկի խաչին նշանը ։

Ուրախ եմք արդարեւ յիշեալ երիտասարդ Թարգմանին այս օրինակ պատիւ գտնելը երկու տէրութեանց առջեւ. որոնք լաւ ճանչնալով կրօնական հասարակութեան համար եղած ծառայութեանց արժէքը, կը փութան եւս վարձատրել զանոնք հրապարակական կերպով ։ Երբ այս դին կը տեսնեմք որ մեր ազգին մէջ՝ դարձեալ կրօնական միաբանութեան եւ ազգային եկեղեցւոյ եւ սուրբ Աթոռոյ մի պայծառութեան եւ անոր իրաւունքները անվթար պահելու համար քրտինք չափ աշխատող եւ հաւատարիմ ծառայութիւններ մատուցող անձինք չէ թէ պատուոյ նշան մի, այլ ազգին կողմէն շնորհակալութեան հասարակ մի անգամ՝ ընդունելու արժանի չհամարուելէն ի զատ՝ հրապարակական թերթերու մի ջոցով ալ նախատանաց եւ զանազան անտակ զրպարտութեանց ենթակայ կը լինին միշտ ։

— Աշխատակից—Բեան օրինակ մ ։ Աղեքսանդրիոյ երեւելի ազգայիններէն զմիւռնացի Յովհաննէս մեծապատիւ Թագւոր այսպէս ազգասիրութեան հոգին շարժեալ Սիոնի բաժանորդութեան երկու օրինակ դրուելէն ի զատ, այս անգամ յատկապէս կը խնդրէ մեզմէ՝ որ օրինակ մի եւս իւր անուանը համար Զմիւռնիոյ Հռիփսիմեանց ուսումնարանին խրկուի. եւ երկու օրինակ եւս ուրիշ ազգային երկու դպրոցներու խրկելու հոգը մեզ յանձնելով, արժան

digitised by A.R.A.R.@

դատեցինք մի օրինակ Օէյթինու և մի օրինակ ևս Աստուծոյ գրքոյներուն յանկացմանէ. որոյ վասն թէ մեր և թէ յիշեալ գրքոյց կողմէն արտատպուած չնորհակալութիւնը հրատարակու կը յայտնենք նորին Ամենապատուութեան:

— Ծառայի դէպք մ. Աղեքսանդրիայէն կը գրեն՝ թէ Տէր Պասպարեան զմիւռնացի Վաղարս ազգային անուամբն և իւր հնդամեայ սիրասուն աղջիկը բարօրութեան իրենց անտառին պարտէզին մէջ շրջագայած ժամանակ, երբ աղջիկը իւր մօրմէն քանի մի քայլ հեռու կը քալէր, յանկարծ գետինը փլչելով խեղճ դստրիկը խորտակող կ՚ըլլայ. կ՚երևի թէ հին ժամանակէ մնացած ստոնիճ մի է, որոյ կամարը ժամանակիս հնութենէն քայքայուելով՝ յանկարծ փլու հնդամեայ աղջկան մի ծանրութենէն, դեռ ըլլալով իրեն՝ հօր և մօր մի փոխադարձ սիրոյն պտուղն ուղեկը. որոնց կսկիծը տաւել կ՚զգան նորա որոնք հայր և մայր ըլլալու բաղդն ունեցած են: Սուրբ Աթոռս իւր կողմէն իւր ցաւակցութիւնը յայտնելով Ս.Ն.Ծ. Վաղարս ազգային բամբ անդարմանելի կորուսին վերայ, կը յուսայ որ նա իւր բարեպաշտութեան և քրիստոնէական առաքինութեանց մէջ միայն պիտի գտնէ ճշմարիտ մխիթարութիւնը:

— Տխուր անցք: Նոր օրինակ աճուրդ մի տեղի ունեցաւ անցեալ ամիս սուրբ Քաղաքիս մէջ: Հրէին մէկը պարտքի տակ ճնշուած ըլլալով, և զանոնք գոհ ընելու չափ կարողութիւն չունենալով, իւր երկու տղաքը՝ մէկն աղջիկ 11 տարեկան և միւսը մանչ՝ անկէ պզտիկ, աճուրդը կը հանէ, և երկուքին մէկէն արժողութիւնը մինչև 30 լիրայի կ՚ելնէ, զոր մահմետական մի աւելցուցած էր: Բայց յետոյ Հրեայ մի 5 լիրա ևս աւելցնելով՝ իւր վրան կը մնայ, և հետևապէս երկու դեռահասակ տղաքը գնոյ կ՚առնու արքունի աճուրդի մէջ: Կ՚ըսուի թէ պայմանագրութիւն եղած է մինչև եօթը տարի ծառայեցնելու. յետ այնորիկ ազատ պիտի ընէ զերենք:

## ՎԱՆ ՏԱԵԼԻ ԱՆՈՒՐՋՔԸ.

Գերմանիոյ ընդարձակ ու անտառապատ պզտիկ քաղաքի մի մէջ սև ու տխուր տեսքով տուն մի կայ, զոր ճամբորդը անցնելու ժամանակ յարգանօք կ՚ողջունէ, որոյ վերայ ռամկական աւանդութիւնը բանաստեղծական ու պարզ պատմութիւն մի թաղուցած է մեզ, զոր աւասիկ հոս կը դնեմք:

Այս տխուր տան մէջ ժամանակաւ գիտուն բժիշկ մի կը բնակէր Վան Տաէլ անունով, որ իւր բազմաշխատ հետազօտութիւններով և համբերատար ուսմունքներովը խիստ բարձր աստիճանի հասուցած էր իւր արհեստը՝ որ չէր բուռած այն ժամանակները, և զարմանալի բժշկութիւններ կը գործէր: Խիստ հեռաւոր գաւառներէ կը դիմէին իւր համբաւը լսողները, մեծատունք և աղքատք, ազնուականք և ռամկացինք անոր դարմաններովը բժշկութիւն և կեանք առնելով՝ գոհութեան երգեր կ՚երգէին և կ՚օրհնէին իւր անունը:

Ի վերայ այսր ամենայնի այսպիսի խորին գիտութիւնը, շողշողուն փառքերն և անհամար օրհնութիւնները Վան Տաէլի չկրցին երջանկութիւն տալ: Օրին մէկը առանձին մնաց աշխարհիս մէջ, այն աշխարհիս զոր իւր հանճարներովը լեցուցած էր, կինը, զաւկները՝ որ իւր սրտին սիրուն հատորներն էին,

digitised by A.R.A.R.@

որքան ալ աշխատեցաւ՝ չկրցաւ մահ-
ուան ձեռքէն ազատել, որ քանի մի
ժամուան մէջ յաղթահարեցաւ : Սոսկալի
հարուած մի. ժամանակը՝ որ նոյն ժա-
մանակին անթիւ զոհեր կ'ընէր Պեր-
մանից մէջ, այն անուշիկ փանձերն ալ՝
որ իր էութեանը ծաղիկներն էին,
խլեց տարաւ :

Այս օրինակ անողորմ թշուառու-
թիւն մի մարդոյս գլխէն չանցնիր եր-
բէք՝ առանց նշաններ թողլու հոն։ Վան
Տաէլի գլուխը ճերմկեցաւ և թա-
փած արտասուքները անոր ամգոյն այ-
տերուն վերայ խոր ակօսներ բացին.
կսկիծն անոր սիրտը կրծեց ու լափեց
անշէջ կրակի նման. ալ աչքին ոչ փառք
և ոչ ուսմունք կ'երեւէր. իր մնա-
ցեալ կեանքն անցուց անցելոյն կսկը-
ծանաց, ներկային տանջանաց և ա-
պառնոյն բոլորովին անտարբերութե
մէջ: Իր գաւառի բարեւէր մարդիկն
տեսնելով այս կենդանի սուգը, որ
իրիկուններն ժայռերուն նիքբերը կը
թափառէր, այն ժայռերուն՝ ուսկէ
երկիրս արտասուքները յուլոր ու որ-
գալի ձայնով մի կաթ կաթ կըհոսէին,
ձեռուընին դէպ յերկինք վերցնելով
կ'ըսէին. «Տէր Յիսուս, ողորմէ Վան
Տաէլին »:

Աստուած որ միշտ ողորմած է աշ-
խարհիս մէջ տառապող թշուառ հո-
գիներուն, լսեց այս լեռնաբնակ մար-
դոց աղօթքը:

Դեկտեմբեր ամսոյն մէջ էր, հովը
սաստիկ կը գոռայր գիշեր ժամանակ,
և ծառերուն մերկ ճիւղերը ողալի
ձայնով մի իրարու կը զարնուէին:
Վան Տաէլ իր խցին մէջ քաշուած
միածալ գրքի մի հաստ թերթերը կը
թղթատէր, որոնց մէջ Հիպպոկրատ
ու Գալիէնոս իրենց գիտութեան գան-
ձերը ամփոփած էին: Սակայն մեքենայ
մի էր կարծես թէ զայն թղթատողը,
գրեթէ ամենեւին զայն չէր տեսնէր.
իր միտքը ուրիշ տեղ զբաղած էր:

Իր մտածութիւնը անոնց վերայ
էր՝ զորոնք մահը յափշտակած էր իր
քովէն, ու կ'ըսէր. Ով գիտութիւն,
գիտութիւն, այսքան երկար ժամանակ
քու ետեւէդ ինկայ և փառօք դրեց
ձեռք ձգեցի. ինչ օգուտ ըրիր դու
ինձ. երբ Աստուծոյ ձեռքը իմ վերաս
ծանրացաւ... : Ունայնութիւն բարձ-
րագոյն, ալէուի կարենս եռ տալ ինձ
իմ ամուսինս Հեղինէն, Պաւլոն ու
Մարթան, իմ սիրուն զաւկներս, ա-
նոնց ժպիտները, անոնց գգուանքները,
ուրախութիւնը որ զիս իբրեւ մանուկ
կ'առոյգացնէր, կը զօրացնէր, եւ
թագաւոր կ'ընէր զիս իմ վարպետու-
թեամբս ամբողջ ժողովրդեան մը՝ ու-
կէ յարգ ու պատիւ կ'ընդունէի:

Յետոյ բանը վերանալով անկէ, կը
թափանցէ կ'անցնի մտքովը անծանօթ և
լուսաւոր գնտերու մէջէն. Հիպպոկր-
ատէսի գիրքը ձեռքէն կը սահի, գլուխն
ալ սեղանի վերայ կ'իյնի, ու անմիջա-
պէս մրափը կը տանի: Իր քնոյն մէջ կը
տեսնէ Հեղինէն և երկու զաւկները՝
որոնք երկնքէն վար կ'իջնէին. Երկար
հայեցուածք մի լի գորովով ու գթով
կ'արձակէին անոր վերայ՝ որոյ սիրեցեալ
ընկերներն էին. և անոնց քաղցր և ան-
մահութենէ զատուած ու մաքուր շուն-
չը՝ աստուածային ներդաշնակութեան
մի պէս Վան Տաէլի ականջներուն մէջ
հնչեցին:

«Ո՛վ, ամուսին իմ, եկ, երգեց
Հեղինէ. մեր խորտակեալ միութիւնը
երկնից մէջ նորէն պիտի կապուի:

«Ո՛վ, հայր իմ, եկ, երգեցին Պաւ-
լը ու Մարթան. եկ սիրէ զմեզ հոս
արքայութեան մէջ, մարդասէր Աս-
տուծոյ քովը. հոն Եդեմայ պարտէզին
մէջ քաղենք քեզ հետ ծաղիկներ, և
մշտավճիտ առուակներուն խոխոջելը

digitised by A.R.A.R.@

մոխիկ ըլլանք և յարտաքուստ ու միջագեղ Սերոբէից երկնքը լանենք , և աղօթենք տառապեալ մարդոց համար . անոնց՝ որոնց սիրտ զգայմունքներն վիրաւորուած է , և անոնց՝ որ ի սիրտ վիրաւորուած ու մեռած են » :

Վան Տանէլի հոգին իւր քնացած ժամանակ թռեր գացեր էր իրմէ : Հետևեալ օրը երբ իւր խուցը մտան՝ դիակ մի միայն գտան հոն :

Թարգմանեալ Գաղղիերէնէ .

ԱՌԱԿ

Հայրական կտակ մը և որ կը կտակուին .

Ինչպէս մեծատուն մի մահուանը վերջին վայրկեաններն իւր միակ զաւակը կանչելով՝ կը պատուիրէ որ իւր ունեցած հարստութեան մէկ մասը բաղձանացը համեմատ բաշխէ , և յանձնելով անոր իւր կտակագիրը կը վճարէ իւր մահկանացուն :

Հայրական օրգին հօրը կամացը համեմատ ամենը ի գործ կը դնէ . որք էին աղքատաց կարօտելոց՝ և այլն և այլն որոշեալ գումարներ նուիրել . և բայց ի տանցմէ՝ հազար դահեկան ալ Աստուծոյ չերկնչող մէկու մը տալ : Խեղճ տղան այս մասին կ՚անձարանայ , ու գործադրութեանը բաւական հոգ կը քաշէ . և եւ մի չգտնար լուծելու տարակուսանքը , և աւելի ցաւը հօրը վերջին կտակը կատարելու անկարող ըլլալը կը համարի : Այսպէս մտատանջութեամբ շրջած տանէն՝ կը տեսնէ դահիճ մը , որ մահապարտեալի մը թևերը կապած՝ կառափնատեղին կը տանէր գլխատելու : Ահա գտայ Աստուծոյ չերկնչող մի ըսելով՝ եռանդէն կ՚երթայ . և երբ դահիճը իւր գործը կը կատարէ , տղան կը մօտենայ իրեն , և իւր հօրը վերջին կտակը մանրամասնաբար պատմելով՝ հազար դահեկանը իրեն տալ կ՚ուզէ իբրև արժանաւորի մը : Իսկ դահիճը զարմանալով այսպիսի արտաքոյ կարգի կտակին վրայ , կ՚ըսէ . Սիրելի տղայ , ի՞նչ կը կարծես , միթէ ես Աստուծոյ չեմ վախնար . ի՞նչ յանցանք ես ունիմ . միայն հրամանակատար ծառայ մի եմ . փոխարքային հրամայեց՝ ես ալ կը կատարեմ . եթէ մեղք կայ՝ նորա է . առ քու դրամներդ և տար տուր որու որ արժան է :

Տղան դրամները առնելով ուղղակի փոխարքային կը ներկայանայ , և թոյլտութիւն խնդրելով առաջարկութեան՝ կը պատմէ Նորին Մեծութեան հօրը կտակը և դահճին պատասխանը : Փոխարքայն քմծիծաղ ընելով կը պատասխանէ . Ցերեկի շատ մտամոլ ես եղեր տղեկ , և կը ներեմ քեզ օրինաց անտեղեակ չըլլալուդ համար . տղան առանց վճռոյ դատաւորին կարող եմ ես մէկ մազ մի անգամ կտրել տալ . արդարև մեք իշխանութեան աթոռը նստած եմք , և կը պատժեմք այն յանցանքները՝ որ բնութիւնը կը ատելցընէ մեզ պատժել . բայց մեզ նման էակ մի , իբրև անբան ապանել տալու հրամանը մեզ չպատկանիր , և կը սարսափեցընէ զմեզ . այդ մասին եղած վճիռը միայն դատաւորաց անկ է , որոնք օրինագրքէն քաղելով կուտան մեզ ի գործադրութիւն . ուստի առ քու հօրդ վերջին կտակը տար անոնց , որոնց անունը լսի քեզ :

Թշուառ տղան նզովելով կտակը՝ կ՚առնու դրամները և անմիջապէս դատաւորին տանն կը կանչնի , և մի քանի լաւ մէջէ կը պատմէ կտակին մասին՝ դահճին և փոխարքային խօսքերը :

Դատաւորին աչքերը շլանալով դրամներուն փայլունութենէն կը փափաքի մարել ձեռքը ընկած որս . բայց

digitised by A.R.A.R.@

որպէս թէ այն անարգ անունը իրեն չներաբերելու համար ճարպկութիւն մի կը մտածէ, և գտնալուն ուրախանալով կ՚ըսէ . Զաւակս այս դրամներս ինձ բերերես, թէ և ես չեմ ընդունիր այդ վատ անունը իմ վրաս առնուլ, բայց հանգուցելոյ մի վերջին կտակին ալ կատարելը սրբազան պարտականութիւն մի է . մանաւանդ աղէկ կ՚ըզգամ որ դուն գործադրելու անկարող պիտի գտնուիս, և խիղճդ ալ քեզ կը նեղէ, ուստի իբեւ օրինաց համեմատ վարուելու համար ահա այն ճանապարհը գտայ :

Ժամանակը ձմերնային ըլլալուն և շատ ձիւն եկած ըլլալով. դատաստանարանին սպասաւորները տանիքէն ձիւները աւլելով վար կը թափէին, որ գիզուելով ըլլալ մի ձեւացած էր : Դատաւորը տղուն կ՚ըսէ . սա ձիւնը կը տեսնե՞ս, այո : հազար դահեկանի կը վաճառեմ քեզ կառնե՞ս . այո Տէր իմ. Արեմն գնա և շուտով վերցնելու աշխատէ : Դատաւորը այսպիսի վարպետութեք կը տիրանայ դրամներուն : Իսկ խեղճ տղան 200 դահեկանի սակ ընելով մշակաց հետ այն անպէտ վաճառքը դատարանէն փոխադրելու կաշխատի : Նորա այնպէս տառապանքը տեսնելով հօրը բարեկամներէն մին, կը հարցնէ թէ ինչ գործ կ՚ընէ : Կը պատասխանէ՝ Հայրական վերջին կտակ մի է որ կը կատարեմ :

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԾՔ

Ճանապարհորդք ի տունս, և ի հայրենիս իւրեանց փութան . իսկ իմաստասէրք ի խելս և յիմաստութիւնս :

Որ վասն անձին անբարի խորհի, այլում բարի ոչ կարէ խորհել :

Ջանկամ ունել խորհրդակից այնիս, զժամանակին՝ զոր ունիս մի կորուսաներ :

Իմաստուն խորհուրդ մեծագոյն է քան զձեռս հզօրաց :

Ոչ զերկիւղս առանց ամենձց, և ոչ զինչս և զմեծութիւն առանց խելաց ստանալի է :

Որչափ բարեկամս ունիս ստացեալ, այնչափ խնայիր ունել քեզ աչս, այնչափ ականջս, և այնչափ ձեռս . և յամենայն կողմանց ունիցիս զնեղութիւն, զուր, և զջշախումն . և սիրա յիմնալ զօգտակարն՝ ոչ ինչ սխալէ : Եթէ տառապանս համարիս զքեզ, ոչ ինչ սխալիս, մի ունելով անձն և բազում աչս, և անդամս որով նախախնամես :

Ինչս պարտ է ստանալ վասն բարեկամաց, և ոչ բարեկամս վասն ընչից :

Ամենեցուն հաճելի գոլ յոյժ դժուարին է :

Որք ի վերայ բազմաց ահեղք են, ի բազմաց երկնչին . զի յումմէ ամենեքին սարսին, նա ինքն յամենեցուն սարսի :

Իշխանքն երիս իրս պարտին ունել հանապազ . առ ժամանակն բնութի, առ ընդդիմադարձս համարձակութի, և որք ընդ ձեռամբ իւր են՝ բարեմտութիւն :

Որպէս զմեղուն ոչ վասն խայթիցն ատեն, այլ վասն պտղոյն սիրեն, նոյնպէս զբարեկամս մի ատեր վասն յանդիմանութեան, այլ վասն քաղցրանութեան սիրեա :

Յիշխեցն հեզ լեր՝ և ընդ իշխանութեամբ երկրպագեալիր :

Իշխան այն է՝ որ զինքն իշխան ոչ գիտէ :

Իմիջի և բարեկամ զայն համարեա, որ ի նեղութեան ժամու օգնէ :

ԿՐՈՄԱՆԵԱՆՑ ՏՊԱՐԱՆԻ.

ՊԷՏՐՈՒՊՕԼ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵԿԵՂԵՑԻ ...

digitised by A.R.A.R.@